



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

4002

281.6

U-97

4. March

1901

2010

11000

Մ Ո Ւ Շ Ե Ղ Վ Ա Ր Դ Ա Պ Ե Տ

40

Մ-97 Մ Ո Ւ Շ Ե Ղ

Հ Ո Վ Ո Ւ Ա Կ Ա Ն

Ո Ւ Ղ Ղ Ո Ւ Ա Մ

Ա Ր Ա Բ Կ Ի Ր Ո Ւ Վ Ի Ճ Ա Կ Ի

Ե Կ Ե Ղ Ե Յ Ի Ն Ե Ր Ո Ւ Ն Ո Ւ Ժ Ո Ղ Ո Վ Ո Ւ Բ Դ Ի Ն

Ի Ն Պ Ա Ս Տ

Ա Ր Ա Բ Կ Ի Ր Ո Ւ Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ա Ղ Ք Ա Տ Ա Ն Ո Յ Ի Ն



Ս Պ Ա Գ Բ Ո Ւ Թ Ի Ն Ե Ղ

Կ. ՊՈԼԻՍ

Տ Պ Ա Գ Բ Ո Ւ Թ Ի Ն Ե Ղ Մ Ա Տ Թ Ի Ո Ս Ե Ա Ն

1901

281.6  
Մ-97

281.6  
5-97

Մ Ո Ւ Շ Ե Ղ Վ Ա Ր Գ Ա Պ Ե Տ

Թ Ո Ւ Ղ Թ

Հ Ո Վ Ո Ւ Ա Կ Ա Ն

Ո Ւ Ղ Ղ Ո Ւ Ա Մ

Ա Ր Ա Ր Կ Ի Ր Ո Ւ Վ Ի Ճ Ա Կ Ի

Ե Կ Ե Ղ Ե Ց Ի Ն Ե Ր Ո Ւ Ն Ո Ւ Ժ Ո Ղ Ո Վ Ո Ւ Ր Գ Ի Ն

Ի Ն Պ Ա Ս Տ

Ա Ր Ա Ր Կ Ի Ր Ո Ւ Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ա Ղ Ք Ա Տ Ա Ն Ո Յ Ի Ն

Բ. ՏՊԱԿՐՈՒԹԻՒՆ

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԿՐՈՒԹԻՒՆ ԵՎ ՄԱՏՔԻՈՍԵԱՆ

1901



ՏՊԱՐԱՆ. ՎԵՄԱԳՐԱՏՈՒՆ. ԿԱԶՄԱՏՈՒՆ ԵՒ ԹՂԹԱՎԱՃԱՌԱՆՈՑ

Յ. ՄԱՏԹԻՈՍԵԱՆ

Պայպըլ-Հաուզ - Կոստանդնուպոլիս

78187  
1272-87

معارف صوميه نظارت جليله سنك ۸ ربيع الاول ۳۱۸ و ۲۲ تموز ۳۱۶  
تاریخچو و ۱۸۵ نومروى رخصتنامه سيله طبع اولمشدر

Ձեզ, ո՛վ Արաբկիրի հազաֆի ու գիւղերու ժողովուրդ, Ձեզ կը նուիրեմ այս քանի մը համառօտ տողերը, զոր իմ հովուական պաշօնս թելադրեց ինձ գրել: Ձանացի հաւատարմօրէն նկարել հոս ձեր պատկերը, որ երկու դեմք ունի, մին այն, զոր ունիք այսօր, իսկ միւսը զոր ունենալ յանձնարարեցի Ձեզ: Երբ իմ խօսքերս ու խորհուրդներս ունենան իրենց օգտակարութիւնն ու արդիւնքը, վարձատրուած պիտի ըլլամ պաշօնիս մեջ, ու դուք պիտի ունենաք Գրիսոնեայ հոգիներու փառքը:

Կ'աղօթեմ Ձեզ ամենուր համար, եւ Տիրոջը օրհնութիւնը կը հայցեմ Ձեր վրայ, իմ բոլոր հոգիովս ու սրտովս:

18 Մայիս 1900

Երկու խօսք Բ. սպագրութեան առթիւ

Նկատելով որ սոյն գրուկին առաջին սպագրութեան 2000 օրինակները սպառելու մօտ են, ու դեռ մեր ժողովուրդին ձեռք հաս մ'անգամ չգտնուիր անոնցմէ. քաջալերուած մեր գրքին հանդէպ ժողովրդեան սիրայիւր ընդունելութենէն, ստիպուեցանք երկրորդ սպագրութեամբ 1000 օրինակ եւս պատրաստել անկէ, միտք ի նպաստ Արաբկիրու ազգ. որբանոցին:

Աղօթարար

Առաջնորդ Հայոց Արաբկիրու Վիճակին

ՄՈՒՇԵՂ ՎԱՐԴԱՊԵՏ



# Թ ու ղ թ Հ ո վ ու ա կ ա ն

Բաւական է, 8Էր, որ քու առջեղ շնորհք գտայ,  
Մռ. ԼԳ. 15

Ա.

Այն օրէն, երբ իմ կրօնական ու հովուական պաշտօնս զիս  
ձեր մօտ փոխադրեց, իմ վրաս ծանրացաւ անաւոր պատաս-  
խանատուութիւնը, հոգալու ձեր մասին, եւ զձեղ հոգիով ու  
մարմինով առաջնորդելու Տիրոջը ծառայութեան: Մեր պաշտօ-  
նավարութեան միջոցին՝ առաջին օրէն՝ ժամանակն ու պարա-  
զաները բաւական ծանր էին, տիրող տնտեսական տագնապին  
պատճառաւ բայց իմ յոյսը՝ հիմնուած Աստուծոյ ողորմութեան,  
մեր վեհ. կայսեր հովանաւորութեան եւ ամենուղ զէպի իմ  
անձս ու պաշտօնս ունեցած սիրոյն վրայ, քաջալերած էր զիս,  
մտնելու ժողովրդական խաւերուն մէջ, եւ բաժնելու ձեզի հետ  
ա՛յն կեանքը, որ խորհրդածութեան առատ նիւթեր կը մատա-  
կարարէր: Ինծի ու ձեզի համար մխիթարական պիտի ըլլար  
անշուշտ այն վայրկեանը, ուր հացի ու հաւատքի անդիմա-  
դրելի պահանջներն իրենց գոհացումը գտնէին լրիւ: Քաղաքէն  
սկսեալ մինչեւ գիւղերուն խորը, սակայն, ամենէն աչքի զար-  
նող եւ ամենէն աւելի տխուր երեւոյթը սա եղած էր, որ ան-  
փակ տուներէն ներս խուժած էր անպատկառ կեանքը, թե-

թեւ ու թուլցած հաւատքին թողած պարապը լեցնելու համար: Տխո՛ւր իրողութիւնն . պատառ մը հացի հայթայթումը ա՛յնքան դժուարութիւններ չունէր իր մէջ , կը բարեւէրներու քրիստոնէական նպաստները ինքնարուխ աղբիւրներու պէս մեր ցամբած լեզուները կը ցօղէին : Հաւատքի ու եկեղեցիի մասին երեւան եկող ցուրտ վերաբերութիւնը , ընտանիքներու բարոյականին պահպանութեանը մասին ծնած մեզի անտարբերութիւնը , եւ երիտասարդ կեանքի մեղմելի ցոխութիւնը զիս թելադրեցին՝ առաջին օրէն՝ թողուլ Քրիստոնէական վարդապետութեան վերացական հայեցողութիւնները , բացատրելու համար սոսկ մեր կրօնին գործնական հրահանգները :

Իմ համոզումով ասիկա էր միակ ճամբան , հոգիներու խաղաղութիւնը պատրաստելու : Բայց թէ մեր կիրականօրեայ քարոզները ունեցա՞ն իրենց շօշափելի ու բաղձացուած արդիւնքը , այն երկուք ու կէս տարուան միջոցին , զոր անցուցինք միասին . — Այո՛ , որովհետեւ դէժ ձանկեղծութիւնը ունեցաք խոստովանելու , թէ ձեր մէջ գոյութիւն ունէին այն բոլոր թերութիւնները , զորս մասնանիշ ըրած էի ու քննադատած խստիւ . — Ո՛չ , որովհետեւ խոստովանութեան անկեղծութեան հետ չունեցաք վճռական հատտատականութիւնը , այդ թերութիւններէն հեռանալու : Անոր համար , որո՞չ պատասխան մը տալու կը վարանիմ : Սակայն դուք , իմ սիրելի եղբայրներս , դուք ինքնին կրնաք վկայել , թէ իմ սաստերուս եւ խորհուրդներուս անաչառութիւնը արդիւնք էին միայն այն չափազանց սիրոյն , զոր ունեցայ դէպի պաշտօնս եւ դէպի ձեզ . կը հաւատայի , թէ անաչառ ըլլալով հաւատարմութեամբ ծառայած կ'ըլլայի պաշտօնիս , եւ հետեւարար , պաշտօնիս հաւատարմութեամբ ծառայելով ձեզի օգտակար եղած կ'ըլլայի , եւ ձեզ առաջնորդած դէպի բարին , ուր կարող պիտի ըլլայինք ըսել . « Բաւական է , Տէր , որ քու առջեւ չնորհ գտայ » :

Շարունակելով հանդերձ՝ եկեղեցիի բեմէն՝ իմ սովորական քարոզներս , ես այս անգամ դադարիար մը յղացայ գրաւորապէս խօսելու ձեզի հետ , կարելի եղածին չափ աշխատելով ժո-

ղովրդականացնել զրիչս եւ հեռանալ առաջնորդական կոնդակներու ձեւապաշտ ու աւանդական պաշտօնականութենէն : Կը յուսամ , թէ մեր անհատական ու ընտանեկան թերութիւնները տետրակի մը մէջ ամփոփուած տեսնելով , մեր լուրջ խորհրդածութեան առարկան կ'ընենք զանոնք , եւ անոնցմէ սրբուելով մեր վրայ կը հրաւիրենք մեր Տէր Աստուծոյն չնորհն ու ողորմութիւնը , որոնց պէտք պիտի ունենան մարդիկ իրենց կեանքի բովանդակ չըջանին մէջ : Սրտի մաքրութիւնը , խղճի անդորրութիւնը եւ հոգիի անխռով խաղաղութիւնը յաջողութեան ամենէն կենսական պայմաններն են . անոնք մարդս զօրաւոր կը չինեն , կարող՝ աշխատելու , գործելու եւ անխոնջ դիմագրաւելու աշխարհի ցաւերուն ու նեղութիւններուն , որոնց ենթական պիտի ըլլայ մարդս , որչափ ատեն հրեշտակի լուսափետուրնեւրէն զուրկ մնան մեր բազուկները , եւ որչափ ատեն մարդկային հոգին ծրարուած մնայ մարմնոյ հողեղէն պատեանին մէջ : Ինչպէս կրիան իր պատեանը կը կրէ եւ կը գործածէ մորթին ու անդամներուն պաշտպանութեանը , մենք ալ պիտի կրենք մեր մարմինը մեր ներքին զգայութիւններուն իբր կեղեւ , եւ մեր ձեւքը պիտի ըլլայ շարունակ անոր գործածութեան օգտակարութիւնն ու վնասակարութիւնը , որչափ ատեն օժտուած ենք անձնիշխան կամքով :

Ձրանսացի համբաւաւոր մատենագիր մը ժողովուրդներու բարեշրջութեան հոգեբանական օրէնքները քննած ատեն , ժողովուրդները կը նմանցնէ բուրգի մը , որուն մեծագոյն մասը կը կազմէ ուամիկը , անոր բարձրագոյն աստիճանները կը կազմեն խորհող դասակարգը , իսկ կատարը կը ձեւանայ գիտուններու , գտիչներու , արուեստագէտներու եւ մատենագիրներու սահմանափակ թիւով : Այս վերջին մասն է , որ պիտի ցոյց տայ ժողովրդեան մը բարոյական ու կրթական զարգացման աստիճանը : Այդ բուրգն է , զոր մենք ալ կը ձեւացնենք մեր տո՛նմային բարձրութեան չըջանակին մէջ : Բայց մեր բուրգը կը մնայ տակաւին իր ստորին խաւին մէջ , զուրկ իր բարձրագոյն աստիճաններէն ու ամենակենսական կատարէն : Մենք պիտի չի-



նենք ու մենք պիտի աւարտենք զանիկա մեր բարոյականին ու մեր նկարագրին ու ժող, որուն պիտի օժանդակէ նաեւ մեր խմացական կարողութիւններուն զարգացումը : Անբարոյական զարգացում մը եւ աննկարագիր յաւաճադիմութիւն մը աւագի վրայ շինուած տուներու պիտի նմանին, ենթակայ փլչելու հովերէն ու անձրեւներէն, եւ ֆնասակար պիտի ըլլան մեր երկրին, մեր ընտանիքներուն եւ մեր եկեղեցիին : Ուստի ամէն բանէ առաջ պէտք է ունենանք պարտաճանաչութեան ըմբռնումը :

Ք.

Պարտք եւ իրաւունք լրումն են ու հիմը ընկերական օրէնքին, որ մարդկային կեանքի շրջանակը կը գծէ : Անհատներու փոխադարձ յարաբերութիւնները, ընտանիքներու համերաշխութիւնը, դիւղերու եւ քաղաքներու մէկմէկու հետ ունեցած աւելցութիւնները, առեւտրական ձեռնարկութիւնները կապուած են այս սկզբունքին, ուրիշ դուրս նոյն իսկ աշխարհի կարգաւորութիւնը պիտի խանգարուէր : Օրինակի համար կը տեսնենք վաճառականներ՝ որոնք նոյն իսկ ամենէն բանուկ առեւտուրներու ատեն կը կորսնցնեն իրենց դրամազլխի հաւասարակշռութիւնը, եւ արհեստաւորներ՝ որոնք չեն յաջողիր բնաւ : Մենք ատանց լրջօրէն մտածելու այս եղածներուն արդիւնքին ու պատճառներուն վրայ, բախտին կամ դիպուածին կը վերագրենք զանոնք, ու ինքզինքնիս գոնացուցած կը կարծենք :

Այս չէ, սակայն, մեր պարտականութիւնը :

Ուղղամիտ խորհրդածութիւն մը մեր գործերուն ու մեր յարաբերութիւններուն վրայ, խնդրին մութ կնճիռը պիտի քակէ, եւ պիտի համոզէ մեզի, թէ այդ կոխներուն, այդ վրդովանքին, այդ ստեղծութեան, եւ այդ ձախողութեան միակ

պատճառն է այն, որ մենք կատարելագէտ չենք կրցած հասկնալ պարտքի եւ իրաւունքի վարդապետութիւնը ու մեզի անձամօթ մնացիք է քրիստոնէական ընկերարանութեան հիմը կազմող աւետարանական սա հատուածը . « ամեն ինչ որ կուզէք որ մարդիկ ընեն ձեզի, դուք ալ այնպէս ըրէք անոնց » (ՄտԷ. Է. 12) : Մենք ս'ը անմիտը պիտի հանդուրժէր երբ ուրիշ մը իր իրաւունքն յափշտակէր . ս'վ պիտի ուղէր որ ուրիշը գար իր տունին խաղաղութիւնը վրդովելու . ս'վ պիտի համբերէր, երբ ուրիշ մը իր պատիւը գողնար իրմէն : Բայց մենք այդ ամենը կընենք, ու կընենք թերեւս անզգալարար :

Կեանքի զարգացած աստիճաններուն մէջ, երբ կատարելագէտ մուտ գտնէ կրօնքը, եւ հաւատքը իր գործնական հրահանգութիւններով մեր հոգիներուն ուղղութիւնը պատրաստէ, այն ատեն պիտի կրնանք փորձով համոզուիլ, թէ բոլոր չարիքները, որոնք մեր ընկերական ու ընտանեկան կեանքը կը վրդովեն, արդիւնք են սիրոյ չզոյցութեան : Պարտքի եւ իրաւունքի վարդապետութիւնը սերտ կապեր ունի սիրոյ օրէնքին հետ : Անոնք որ այս օրէնքին կը հարասակին այլ եւս պէտք չեն զգար ինքզինքնին դժուարութիւններու մասնել իրենց փոխադարձ պարտքերն ու իրաւունքները ճանչնալու համար : Այն ատեն ամեն գործ ու ամեն ձեռնարկ իրենց արդար կշիռն ու չափը կուենան . նոյն իսկ մութին ու մեր կնճուտ հաշիւներուն մէջ անգամ շատ լուսաւոր կըլլայ, այն ատեն, մեր խորհրդածութիւնը, երբ կարգը գայ պարտք մը կատարելու եւ իրաւունք մը գնահատելու :

Ձեր մէջ տեսայ էրիկներ, որոնք ընտանեկան խաղաղութիւննին կորսնցուցած, անբաստանած են իրենց կիները, իրր պատճառ իրենց հոգեկան տագնապներուն : Քննութիւնը ցոյց տուեր է, որ ընտանեկան խուլութեան մէջէն բողոքի ձայն բարձրացնող էրիկները եղած են՝ շատ անգամ՝ պատճառ այն բոլոր դժբախտութիւններուն, որոնք բոյն դրած են իրենց տուններուն մէջ . որովհետեւ կատարելագէտ մոռցած իրենց դէպի կիսն ու զաւակները ունեցած նուիրական պարտականութիւն-

ները , լոկ պահանջողներ եղած են , առանց սիրելու իրենց կի-  
 ները , անտնցմէ սիրուիլ պահանջած են , առանց խնամելու ի-  
 րենց զաւակները , անտնցմէ խնամք ու սիրտինսք ակնկալած  
 են : Ու փոխադարձաբար կիներ իրենց այրերը ամբաստանած  
 են , մոռնալով որ իրենք ամեն բանէ առաջ ունենալու էին  
 պարկեշտ վարք ու առաքինի կեանք , իբր հաւասար բաժա-  
 նորդը տան պարտքին ու իրաւունքին . մոռնալով որ բարի  
 կինը շնորհն է իր էրկան (Ա.Վ. ԺԸ. 22) : Տեսեր եմ խանութ-  
 պաններ , որոնք այս կամ այն յաճախորդն ամբաստանած են , իրեն  
 պարտքը չլծարկելուն համար , քննութիւնը ցոյց տուեր է , թէ  
 իրենք աւելի չարաշահ գտնուեր են օգտուելով յաճախորդին  
 նիւթական անձկութիւններէն . տեսեր եմ գործաւորներ , որոնք  
 իրենց գործատէրերը քամահրած են , իրենց գրամբ անվճար  
 թողած ըլլալու ամբաստանութեամբ , մոռնալով որ իրենք  
 գողցած են անոնց գործէն ու աշխատութենէն :

Եթէ ուղէինք մանրամասնել մեր թուարկութիւնը . պար-  
 տազանցներու ցանկը պիտի խոչորնար անվերջ , համաձայն իւ-  
 րաքանչիւր անհատի դիրքին ու վիճակին , զոր ունի երկրի  
 վրայ , եւ համաձայն ի՛ր խառնուածքին ու նկարագրին անհո՛ւն  
 զանազանութիւններ յառաջ պիտի գային պարտազանցութեան  
 կամ անիրաւութեան , այնպէս որ այլ եւս չպիտի կրնայինք  
 գտնել մէկը , որ իրապէս քրիստոնէական վարմունքով ապրած  
 ըլլար : Երբ իրողութիւնը իր ընդհանրութեան մէջ մարդս կաշ-  
 կանդած է անիրաւ գործերով , տակաւին կա՛ն վայրկեաններ ,  
 ուր մենք կ'ունենանք գէթ արդար ըլլալու խղճմտութիւնը :  
 Հիմա հարցուցէք դուք ձեզի , թէ երբ աւելի հանգիստ եղած  
 են ձեր հոգիները . պարտաճանաչութեա՞ն թէ անիրաւութեան  
 ատեն : Այս հարցումին ինչ որ պլ պատասխանէ ձեր սիրտը ,  
 սա ստոյգ է որ արդարասէր ու պարտաճանաչ մարդը երբէք  
 չի կորսնցներ հոգիի խաղաղութիւնը , եւ ներքին գոհունակու-  
 թեան այն զգացումը , որոնք մարդուս կեանքը կ'անուշցնեն  
 ամենէն ցուրտ դառնութիւններուն մէջ : Այնպիսիին կեանքը  
 կը նմանի խաղաղ ու յստակ լճակին , որ չի պղտորիր ալիքներով

ու փրփուքներով . կը նմանի առուակին , որ քարերու մէջէն  
 հանդարտ կը սահի կ'անցնի դիլ դիլ , իր շրջակաները ուրա-  
 խութիւն եւ հմայք տիւելով :

Մեզմէ ո՛վ չփախաքիր այդ խաղաղ կեանքին , հոգեկան  
 այդ անդորրութեան : Սակայն սոսկ փախաքով ապրիլը ամենէն  
 տխուր կեանքն է մարդուս : Բաղձանքը տանջանք մը կ'ըլլայ  
 մեզի համար , եթէ վրիպի իր արդար օրինաւորութենէն , ու  
 մեզի պակսին զայն գոհացնելու անմեղ միջոցները : Հարցուցէք  
 նախանձոտ ու չար մարդերուն , որոնք ուրիշին հարստութեան  
 ու գեղեցկութեան կը ցանկան , եւ կը խորհին անիրաւութեամբ  
 տէր դառնալ անոնց . հարցուցէք ա՛յդ մարդերուն թէ հոգե-  
 կան ի՛նչ տազնապներով ու անձկութիւններով պաշարուած են  
 իրենք . միշտ խռոված , մի՛շտ ալեկոծ , անհանդարտ ու ան-  
 հանգիստ , ինքզինքնին կը կրծեն ու կը մաշեն , մինչև որ ի-  
 րենց անիրաւ նպատակին հասնելու միջոցը գտնեն : Եւ բարե-  
 բախտաբար , շատ անգամ կը վրիպին իրենց նպատակէն ու  
 ձեռնարկէն . արդարութի՛ւնը յանկարծակիի կը բերէ զիրենք ,  
 այդ ցնորական երազներէն յուսահատութեան , լքումի եւ ան-  
 պատուութեան բաժին մը թողլով անոնց :

Ուրկէ՞ կուգան այս ամենը . — Միայն մեր այն զանցա-  
 ութիւնէն , որով ուրիշին իրաւունքի սահմանին մէջ կը մտնենք ,  
 ու կը զրկենք մեր նմանները :

Եթէ հայրը կատարելապէս ըմբռնած ըլլար իր տան մասին  
 ու իր զաւակներուն հանդէպ ունեցած պարտականութիւնները ,  
 եթէ էրիկը ճանչցած ըլլար իր կինը երջանկացնելու եւ անոր  
 մէջ իր բովանդակ ՅՍը պաշտելու սկզբունքը . եթէ կինը զգա-  
 ցած ըլլար միմիայն իր էրկան ու զաւակներուն մէջ ընկուզած  
 ապրելու իր բարեբաստիկ կոչումը , հիմա երջանիկ եղած պիտի  
 ըլլայինք : Եթէ քահանան ըմբռնած ըլլար իր կոչման ու պաշ-  
 տօնին անաւորութիւնը , ու կատարեալ արժանաւորութիւնով  
 Յիսուսի Քառութեան անմահ խորհուրդը ընդելուզէր մեր մահ-  
 կանացու մարմիններուն հետ . եթէ մենք , Քրիստոնեայ եղ-  
 բայրներս , ունեցած ըլլայինք Աւետարանի խղճմտութիւնը , եւ

անկէ ու անոյ սրբուելու պատրաստակամութիւնը , եթէ ողորմասիրութիւնը , աղքատասիրութիւնը , եկեղեցասիրութիւնն ու կրթասիրութիւնը իրենց անհրաժեշտ տեղը բռնած ըլլային մեր նկարագրին ու մեր սկզբունքներուն մէջ . եթէ երբէք աւետարանական բարոյականի անյեղլի օրէնքները որդեգրած ըլլայինք, հիմա աւելի մխիթարուած պիտի ըլլային մեր սրտերը : Եթէ ուսուցիչները ճանչցած ըլլային իրենց վրայ ծանրացող պատասխանատուութիւնը եւ իրենց պաշտօնին անհրաժեշտ մտքի ու սրտի պաշարն ամբարած ըլլային , եթէ ծնողներն յօժարակամ տային իրենց դրամը զաւակներուն կրթութեանն ու դաստիարակութեանը համար , եթէ աշակերտներն ունեցած ըլլային ազգագայի սովոր իրենց դիրքին ու կացութեան լայն ըմբռնումը եւ ճանչցած ըլլային ժամանակին յարգն ու արժէքը , հիմա աւելի զարգացած պիտի ըլլային մեր մտքերը : Եթէ արհեստաւորն ու երկրագործը գիտնային զնահատել իրենց կոչումը , եւ այն շնորհը , զոր Աստուած պարգեւած է իրենց , եւ աշխատած ըլլային իրենց ձեռագործին կամ արուեստին մշակութեան , եւ երկրագործական ծանօթութիւններ ամբարած ըլլային , հիմա աւելի բարիք ու օրհնութիւն պիտի գտնէինք մեր տուներուն մէջ :

Անա , ուրեմն մենք կենդանի վիաներ ենք պարտագանցութեան տխուր հետեւանքներուն : Ազնիւ նկարագիրը եւ պարկեշտ վարքը պարտաճանաչութենէն կրնայ ճանչցուիլ միայն : Հետեւաբար, որչափ ատեն մեր բարոյական կեանքին մէջ պարտաճանաչութիւնը գոյութիւն չունենայ , չպիտի կրնանք ինքզինքնիս իբր պարկեշտ մարդեր ներկայացնել աշխարհի :

Սրբէն Աւետարանը շատ լաւ ամփոփած է մեր պարտականութիւններուն ամբողջութիւնը . « Քու Տէր Աստուածդ սիրես քու բոլոր սրտովդ եւ քու բոլոր անձովդ եւ քու բոլոր մտքովդ : Քու ընկերդ սիրես քու անձիդ պէս » (Մ. Բ. 37-39) եւ թէ « Այն որ կայսերն է կայսեր տուէք , եւ այն որ Աստուծոյ է Աստուծոյ տուէք » (Լուկ. Ի. 25) : Անձ , ընկեր , կառավարութիւն եւ Աստուած իրարու լրացուցիչ մասեր են աշ-

խարհի վրայ , այնպէս որ մարդիկ ի՛նչ զարգացումի ու ի՛նչ յառաջդիմութեան ալ հասած ըլլան , պիտի հովանաւորուին կառավարութենէն ու Աստուծա՛ն : Որպէս զի մենք մեր Աստուծոյն , մեր կառավարութեան ու մեր ընկերոջ հանդէպ ունեցած պարտքերնիս խզճի մտքը հատուցանենք , պէտք է ամէն բանէ առաջ գիտնանք սիրել մեր անձը եւ գնահատել զանի : Որովհետեւ մեր անձն է որ իբր չափ ու աստիճան պիտի ծառայէ մեր միւս պարտականութիւններուն : Մեր անձին արժէքը չը գիտնալին է որ ՊԱՐՏԻՔը լուծի չափ ծանր կուգայ մեզի : Անձը սիրելու սկզբունքը , սակայն , երբ չարաչար գործածուի , այն ատեն մեզի կ'առաջնորդէ ո՛չ նուազ միատակար մոլութեան մը , որուն սովորաբար հպարտութիւն եւ ետամուտութիւն անունները կուտանք : Մեր քաղաքին մէջ անձին մոլութիւնը չփոթուած է բողոքովին առաքինական անձնասիրութեան հետ . այնպէս որ վեհաճճն կ'անուանենք ա՛յն մարդերը , որոնք իրենց վրայ կը մարմնացնեն հպարտութեան ծայրայեղութիւնը : Մեր տեղական բարբառին մէջ գործածուած բառի այս սխալ առումն ալ կրնայ ազգացոյց մ'ըլլալ թէ մենք չենք կրցած տակաւին գնահատել անձին սէրը , եւ թէ՛ սրամաղիւր ենք առաքնութիւնը մոլութեամբ փոխանակելու շատ հեշտ կերպով :

Աւետարանի սովրեցուցած անձնասիրութիւնը վտանգ մը ըլլալէ աւելի , մեզ պիտի առաջնորդէ պարտաճանաչութեան սկզբունքին . ճանչնալով մեր ԵՍը , գնահատելով անոր պահանջներն ու իրաւունքները , կատարելով անոր ունեցած պարտքերը , միեւնոյն ձեւով պիտի ճանչնանք ու պիտի գնահատենք առ Աստուած եւ առ մարդիկ մեր ունեցած պարտաւորութիւնները , զգալով թէ ամբողջական մարդկութեան մէկ չնչին հիւլէն կը կազմենք մենք : Ո՛վ որ փոքր մասը կը սիրէ անկեղծ ու անաչառ հողիով , զայն կը սիրէ նաեւ իր ամբողջութեանը մէջ : Եւ ահա , թէ ի՛նչպէս մարդիկ մէկզմէկ սիրելով կ'առաջնորդուին նաեւ յարգելու մէկզմէկու իրաւունքները :

Թող ուրեմն , մեր խորհուրդներն ու գազափարները՝ աւետարանական սուրբ սէրէն օծուած՝ առաջնորդեն մեզ ի բարին ,

ուր պիտի ունենանք հոգեպէս զօրացնող վայելքը պարտակա-  
նութեան : Այն ատեն պիտի օրհնուին մեր տուները , եւ մեր  
Տիրոջ Յիսուսի շնորհաց աղբիւրները կենդանութեան ջրեր պիտի  
բղխեն մեզի : այն ատեն միայն պիտի կրնանք ըսել . «Բաւա-  
կան է , Տէ՛ր , որ քու առջեւ շնորհք գտայ» :

Պ.

Աստուած մարդկային կեանքի երջանկութիւնը դրաւ ըն-  
տանիքին ծոցը :

Ամէն մարդ որ կ'ապրի՝ իր պտուղը այդ երջանկութեան ,  
կը պատկանի ընտանիքի մը , կամ ինչպէս սովորաբար կ'ըսենք՝  
տունի մը :

Տունը օթեւան մըն է , ուր էրիկն ու կնիկը իրենց ամուսնու-  
թիւնով կը կազմեն արգասաւորութեան բոցը , նման թռչուննե-  
րուն , արտադրելու համար զաւակներ , որոնք իրենց անունն ու  
արիւնը պիտի կրեն : Տունին հիմնադիրներն եղող հայրն ու մայրը՝  
իրենց կարգին՝ օր մը տեղի պիտի տան իրենց զաւակներուն անոնց  
թողլով նիւթական ու բարոյական ժառանգութիւն մը : Գիտու-  
թիւնը կը սորվեցնէ , թէ ի՞նչպէս հիւժախտի ու յիմարութեան  
նման հիւանդութիւններ զաւակներու եւ սերունդներու կը փո-  
խանցուին ժառանգականութեան օրէնքով : Արեւցութեան , ծու-  
լութեան , անբարոյութեան եւ անպարկեշտութեան նման բարո-  
յական հիւանդութիւնները կամ մոլութիւններն ալ ժառանգա-  
կան միեւնոյն օրէնքով կը փոխանցուին : Դուք իսկ այս ճշմար-  
տութեան կրնանք վկայել , առանց ժառանգականութեան օրէն-  
քին տեսականը սովորած ըլլալու , մտքի առջեւ բերելով այն  
պարագան , ըստ որում քաղաքիս մէջ զստուած քանի մը ան-  
պարկեշտ կիները հեռաւոր կամ մերձաւոր աղգականութիւն-  
ներ ունին մէկմէկու հետ : Երբ այս է իրաց ճշմարտութիւնն ու  
վախճանը , հիմա դառնանք դէպի ընտանիքը , եւ մեր խորհրդա-

ծութեան առարկայ ընենք սա կէտը , թէ ի՞նչ է ընտանիքին  
կոչումը :

Ընտանիքի կոչումն է սերընդագործելով հաւատացեալ ու-  
անքիժ հոգիներ պատրաստել Աստուծոյ համար , եւ պարկեշտ  
ու առաքինի քաղաքացիներ՝ երկրին համար :

Մեր ընտանիքները լաւ չեն ծառայած իրենց կոչումին ,  
վիժած ու ապականուած սերունդներ տալով աշխարհի : Որով-  
հետեւ ո՛չ միայն պարտականութեան զանցառութիւնը տիրա-  
պետեր է մեր բարքերուն , այլ եւ շատ անգամ ամուսնութիւն-  
ներ կնքուած են ո՛չ թէ սիրոյ ու փոխադարձ հաւանութեան  
սկզբունքին վրայ հիմնուելով , այլ մանաւանդ շահու եւ ար-  
տաքին գեղեցկութեան մը սուտ հրատյոյրին վրայ : Սէրը հա-  
շիւ չճանչնար ընաւ . մահուան չափ զօրաւոր է անիկա : Երբ  
հաշիւին հանգոյցը քակուի ու դրամն սպառի , ի սկզբան ցոյց  
սրուած առեքեւոյթ սէրն ալ կը դադրի իր գոյութեան իրա-  
ւունքէն . նմանապէս երբ դէմքի գեղեցկութիւնը խորշովի ,  
մինչեւ այն ատեն վարագուրուած սրտի աղտոտութիւններն կը  
սկսին երեւան դալ , եւ ցոյց տալ թէ առանց սիրոյ ամուսնու-  
թիւն մը դժոխքի հիմնարկութիւն մըն է ըլի : Ո՞վ պիտի երաշ-  
խաւորէ քեզի դրամին յաւիտենականութիւնը քու հաշուական  
ամուսնութեանդ համար , եւ կամ ո՞վ պիտի երաշխաւորէ քեզի ,  
թէ միշտ «դէմքը սրտին հայելին է» : Ամուսնութեան առաջին  
պայմանն է փնտուել ո՛չ թէ արտաքին այլ սրտի ու հոգիի գե-  
ղեցկութիւնը , փնտուել ամուսնացողներուն տարիքի , դիրքի ու  
խառնուածքի յարմարութիւնները , եւ պահանջել փոխադարձ  
սէր ու համակրութիւն : Կանխահաս ամուսնութիւնները , եւ  
առանց տղուն կամ աղջկան հաւանութեան օրհնուած պսակ-  
ները տանջանքի ու թշուառութեան թելերով շղթայ մը կը հիւ-  
սեն , ծանր ու անտանելի , եւ այնու կը դառնացնեն կեանքը  
իր բովանդակ տեւողութեան մէջ : Միայլ ընտրուած կամ չա-  
փազանց տգեղ կիներ պատուհասն է իր էրկան , եւ չափազանց  
գեղեցիկ կիներ տգեղ էրկան մը փորձութիւնը կ'ըլլայ : Ուստի  
ձեր պարտականութիւնն է , ո՞վ հայրեր ու մայրեր , ձեր զա-

ւակները առաջնորդել բարեբաւորիկ ամուսնութիւններ պատ-  
րաստելու ճամբուն , յարգելով միշտ՝ աղջկան ու տղուն մէջ՝  
իր ամուսինն ընտրելու ազատ իրաւունքը :

Տունին մէջ միեւնոյն կոչումն ունին էրիկն ու կնիկը , միայն  
այդ կոչման ծառայելու եղանակը կը տարբերի երկուքին հա-  
մար : Էրիկը գուրսի մարդն է , իսկ կինը ներսի , մին աշխա-  
տութեան մարդն է , միւսը՝ սիրոյ , մին ուժի մարդն է , միւսը  
գգուանքի , վերջապէս մին տառապանքի մարդն է , միւսը՝  
մխիթարութեան : Եւ ամուսնութիւնը խորհուրդ մըն է անոր  
համար , որ դիտէ այս խառնուրդով ներդաշնակ ու ամբողջա-  
կան միութիւն մը կազմել : Սաղմոսերգու մարգարէն ալ միեւ-  
նոյն տարբերութիւնը կը դնէ էրկան ու կնոջ միջեւ . երբ առա-  
ջինը գուրսը բուննող տունկերու եւ երկրորդները պալատի քա-  
րերու կը նմանցնէ . «Մեր որդիքը իրենց երիտասարդութեանը  
մէջ տունկերու պէս մեծնան , ու մեր աղջիկները պալատի չէն-  
քին համար փորագրուած անկիւնի քարերուն պէս ըլլան :  
... Երանի՛ անանկ վիճակի մէջ եզող ժողովուրդին» (Սա՛.  
ՃնԳԳ. Կ2-15) : Կինը թէպէտ տկար իր խառնուածքով , բայց  
ամենէն զօրաւոր տարրը ունի իր մէջ , անոր համար ժողովուրդ-  
ներու ապականութիւնը կամ աղնուացումը միշտ կախում ունե-  
ցած է կնոջ յոռի կամ լաւ նկարագրէն : Հետեւաբար կիներու  
պարկեշտութիւնը չ'ապականելու համար , էրիկները պէտք է  
իրենց հոգիին բոլոր գուրգուրանքը նուիրեն անոնց , հաւատքի  
չափ զօրաւոր պաշտուածով . անոնք գեղատեսիլ ընութեան փոք-  
րանկարն են . ծաղկոտ նմոյշը զգացումի ու քաղցրութեան ,  
եթէ սեղմենք , պիտի փշրուին մեր մատներուն մէջ . եթէ ա-  
տենք՝ այլ եւս չ'պիտի կրնան ապրիլ անոնք , հակառակ իրենց  
ընկճող ուժին , անոնք ընտանիքի մը պէտք ունին ու գթոտ  
պաշտպանութեան մը : Յաւէտ դատապարտելի պիտի ըլլայ այն  
մարդը , որ կը յանդգնի կնոջ հոգին ապականել , ու անկէ վեր-  
ցնել իր հաւատքը : Պետրոս առաքեալ իր ընդհանրական առա-  
ջին թղթով կը գրէ . «Նմանապէս էրիկները խոհեմութիւնով  
անոնց (այսինքն կիներուն) հետ բնակին , իբր տկար անօթի

7272 - 87

պատիւ տալով կիներուն , իբրեւ կենաց շնորհքին ժառանգա-  
կիցներու , որ ձեր աղօթքներուն արգելք չըլլայ» (Գ. 7) : Իսկ  
Տիմոթէոս Դիւքոմ շատ իրաւամբ կ'ըսէ . «Մարդ մը որ կո-  
րուսած է իւր հաւատք եւ իւր յարգանք կնոջ վրայ , ընդ-  
հանրապէս կորուսած է նաեւ իւր հաւատք եւ իւր յարգանք  
Երկնից վրայ :»

Էրիկներուն հրամայուած է սիրել իրենց կիները եւ չի նե-  
ղել զանոնք (Կ-դ- Գ. 19) : Այս պատուիրանը ամբողջումն է  
այն բոլոր պարտաւորութիւններուն , զորս էրիկն ունի իր կնոջը  
հանդէպ , որովհետեւ սէրն է առաջին ու վերջին օրէնքը ա-  
մուսնական կեանքին : Շատ մը էրիկներ իրենց իշխանութիւնը  
չարաչար կը գործածեն իրենց կիներուն վրայ , եւ անոնցմէ կը  
պահանջեն արտակերպոն հպատակութիւն մը ամեն պահանջնե-  
րուն : Կնոջ հնազանդութիւնը եւ էրկան իշխանութիւնը , սա-  
կայն , ի հիման միեւնոյն իրաւունքներով սահմանուած են , այն-  
պէս որ երբ Առաքեալը կիներուն հնազանդութիւն կը պատ-  
ուիրէ , այլուր եւս ցոյց կուտայ , թէ ինչպէս «էրիկն է կնոջ  
մարմնոյն իշխողը , նմանապէս , կինն է էրկան մարմնոյն իշ-  
խողը (Ա. Կ-բ՛. Է. 4) : Առաքեալին մատնանշած սոյն փո-  
խադարձ իշխանութիւնը ի յայտ կուգայ եւ կը ճշմարտուի  
այն փոխադարձ հպատակութեան մէջ , ուր երկուստեք ար-  
տայայտուած արդար բաղձանքներ իրենց գոհացումը կը գտնեն :  
«Հայրե՛ր , ձեր որդիները մի՛ բարկացնէք , հապա գանոնք  
մեծցուցէք Տիրոջը վարժութիւնովը ու խրատովը» (Եփե- Զ. 4) :

Աշխարհի մեռեալները՝ որոնք անհունապէս շատ են կեն-  
դանիներէն , մեզի ժառանգութիւններ ձգեցին իրենց նկարա-  
գրէն ու խառնուածքէն : Հարցուցէք Սրբազան ու արտաքին  
Պատմութեան , որ անյորդի մը պէս դարերու , աշխարհներու  
եւ ժողովուրդներու խորբէն կուգայ մեզի , միշտ երիտասար-  
դացած ու միշտ առոյգ , ու անիկա ձեզի ցոյց պիտի տայ կնոջ  
մատը այն բոլոր պատահարներուն ու դէպքերուն մէջ , որոնք  
իրենց կարեւորութիւնով զինքը կ'ամբողջացնեն : Մութ կնճիւ-  
ներուն , բարդ հայիւներուն , սիրոյ բանազորութիւններուն ,

վերջապէս պատմութեան բանալին է անիկա : Օր մը մենք ու մեր Սերունդները՝ իրենց կարգին անոր ժառանգորդները պիտի ըլլանք : «Բարի համբաւը, կ'ըսէ առածը, երկրորդ ժառանգութիւն մըն է» . ընդհակառակն ես պիտի ըսեմ, թէ բարի համբաւը առաջին ու իրական ժառանգութիւնն է, զոր երբեք մարդիկ պիտի թողուն իրենց զաւակներուն :

Կինը կամ մայրն է աւելի այդ ստացուածքին տէրը : Արգանդին կենդանասերմը, իր առաջին շարժումութեան օրէն մինչեւ իր հասուն հասակը զերծ չպիտի կրնայ մնալ մօր մը ազդեցութենէն : Եւ ո՛րքան գեղեցիկ պիտի ըլլար, ու հրաշալի, երբ այդ ազդեցութիւնը շաղուբւած ըլլար առաքինութիւնով ու պարկեշտութիւնով : Իմաստունն ու Առակախօսը միեւնոյն լեզուն կը խօսին, երբ խնդիրը բարի ու չար կ'նոջ զանազանութեան կուգայ : Ժրագլուխ կինը իր էրկան պսակն է, ինչպէս որդը փայտին՝ նոյնպէս ալ չար կինը իր էրկան փնասակար է (Առակ. ԺԲ. 4) .

— Իմաստուն կիները իրենց տունները շինեցին, իսկ անզգամները իրենց ձեռքով կործանեցին (Նոյն. ԺԳ. 1) . — Աւելի աղէկ է բնակիլ անապատը, քան անդգամ, լեզուանի ու բարկացող կնոջ հետ (Անդ. ԻԱ. 19) : Ընդհակառակն . «Պարկեշտ կինը Տիրոջը սուբքն է» (Սէբու. ԻԶ 17), եւ «Երանելի է բարեբարոյ կնոջ էրիկը» (Սէբու. ԻԶ. 1) : Առանց պարկեշտութեան, առանց բարեբարոյութեան ու համեստութեան «ո՛վ կիներ, ձեր ճշմարիտ անունը ունայնասիրութիւն պիտի ըլլայ» :

Հոս թարգմանելով պիտի զնեմ պարկեշտ, իմաստուն ու աշխատասէր կնոջ պատկերը, զոր Սողոմոն իր իմաստութեան նկարակերտ վրձինով գեղազարած է Առակաց գրքին մէջ :

«Եթէ ժրագլուխ կնիկ գտնուի, այնպիսին պատուական քարերէն պատուականագոյն է . իր էրկան սիրտը վատահ է անոր, ու աւարի կարօտ չըլլար : Անիկա իր կեանքի բոլոր օրերուն իր էրկան կը գործակցի բարիքի եւ ոչ թէ չարիքի համար : Բուրդ ու քթան կը գտնէ եւ իր ձեռքով օգտակար բաներ կը շինէ . անիկա վաճառականի նաւերուն կը նմանի, իր գանձը հեռու տեղէն կը բերէ : Աստուն կանուխ կ'եղնէ, եւ

իր անեցիներուն հաց ու սղախիններուն գործ կուտայ : Գեղեցիկ արտ մը կը տեսնէ, ու ծախու կ'առնու զայն, եւ իր ձեռքերու պտուղէն այգի կը անկէ : Իր մէջքը ուժով կը սնդէ եւ իր բազուկները կը զօրացնէ, եւ ուսելով կը հասկնայ թէ անուշ բան է գործելը : Անոր ճրագը չի մարիր գիշերն ի բուն, իր ձեռքը իլիկին կ'երկնցնէ : Էրիկը տեղ մը ուշացած ատեն տանը մասին չի հոգար բնաւ, որովհետեւ հոն բնակողները կրկին հանգերձ հագած են : Իր էրկան բեհեզ ու ծիրանի կը շինէ, իսկ իրեն համար ծածկոյ : Անոր էրիկը կը ճանչցուի դռներուն մէջ երբ երկրին ձերերուն հետ կը նստի : Կտաւ կը գործէ եւ վաճառականներուն ծածկոյ կը ծախէ : Իր բերանը չափով ու իմաստութեամբ կը բանայ, եւ իր լեզուին կարգ կանոն կը դնէ : Զօրութիւն եւ մեծվայելչութիւն կը հագնի, ու վերջին օրերը պիտի ուրախանայ : Պարկեշտ են իր տան ճամբաները . ծուլութեան հաց չուտեր բնաւ : Եւ իր ողորմածութիւններով մեծցան զաւակները : Էրիկը կը գովէ զինքը եւ կըսէ . շատ աղջիկներ մեծութիւն ունեցան եւ շատեր զօրութիւն, բայց դուն ամէնքը գերազանցեցիր, քու մէջք կնոջ սուտ վայելչութիւն եւ ունայն գեղեցիկութիւն չկայ, որովհետեւ իմաստուն ու բարեպաշտ կինը կ'օրհնուի» : (Լու. 10-31) :

Ահա այն գեղեցիկ նկարը, որուն մէջ կինն ի յայտ կուգայ իր պարտականութիւններով զարգարուած : Ալ ի՞նչպէս չօրհնուի այն տունը, ուր կինն ինքզինքը ամբողջովին կը նուիրէ իր էրկան, իր զաւակներուն, իր Աստուծոյն : Հոս մարմինն ու հոգին գործերը ա՛յնքան լաւ հիւսուած են իրարու հետ, ու բնտանեկան տիրոջ երջանկութիւնը ա՛յնքան դուրս ցցուած է, որ մեր մէջ բարի նախանձը կը ծնի զանիկա մեր տուններուն օրինակը շինելու : Վատահ եղիք, մայրեր, թէ երբ ուշի ուշով մտիկ ընէք ու կարգաք Սառայի, Աննայի, Հուսթի եւ ուրիշ շատ մը օրհնուած կիներուն պատմութիւնները, պիտի տեսնէք որ անոնց դիմադժերէն շինուեցաւ իմաստունին կնոջ նկարը, եւ թէ անոնք միայն իրենց բարեպաշտութեան, առաքինութեան ու պարկեշտութեան գործերովը կրցին հիւ-

սել իրենց ճակտին լուսապսակը : Ջանացէք, կիներ, անոնց օրինակին հետեւիլ ձեր ազջիկներուն ու տղաքներուն ձգելու գործի ու կեանքի բարի ժառանգութիւնը, որպէս զի դուք ալ վերջին օրերուն ձեր սրտի ու հոգիի մեծվայելութեան ու գեղեցկութեան խորէն կարող ըլլաք ըսելու .

« Բաւական է, Տէր, որ քու առջեւ չնորհ գտայ » :

Պ.

Մեր ժողովուրդը ուրիշներուն պէս կազմուած է տարբեր տարիքի, սեռի ու վիճակի պատկանող անհատներէ : Ասոնց իւրաքանչիւրը՝ իրենց կարգին՝ անցած են ու պիտի անցնին կեանքի այն շրջանէն, որ երիտասարդութիւն կ'ըսուի, եւ որ ամենէն փորձանաւոր եւ ամենէն աւելի ուշադրութեան արժանի շրջանն է : Ով որ իր կեանքի առաջին քառորդին խնամք կը տանի աւողջութեանը, բարքին ու նկարագրին, կեանքի մնացեալ օրերուն ա'լ պէտք չզգար հոգ ընելու : Կ'արժէ, ուրեմն, որ պահ մը կանգ առնունք հոս, մեր խօսքը ուղղելու մեր երիտասարդ ու տարեկից եղբայրներուն :

Կը յիշէք, անշուշտ, երբ դեռ մանուկ էիք, թէ ի'նչ գուրգուրանքով ձեր հայրն ու մայրը զձեզ սիրեցին ու խնամեցին . իրենց յաջողութեան եւ ուրախութեան մէջ կուռք մը եղած էիք, պաշտուած ձեր ծնողքէն . ձեր հիւանդութեան ու պըղտիկ անհանգստութիւններուն մէջ անգամ, ձեր ծնողքը թայ աչքերով հսկեցին ձեր վրայ գիշեր ցերեկ, իրենց սիրոյ ու պաշտումի ազապատանքին մէջ ծրարելով ձեզ :

Կը յիշէք անշուշտ, երբ դեռ մանուկ էիք ու պատանիներ, ձեզմէ ամեն մէկը դպրոցի աշակերտ մըն էր : Ո'րչափ ալ թեւրի եղած ըլլային ձեզի տրուած ուսումն ու կրթութիւնը, վեր-

ջապէս հոն կրցիք զգալ թէ դպրոցական կեանքը սկզբնաւորութիւն մը, նախաքայլ մըն է այն կեանքին, որուն պիտի թեւակոխէիք քիչ վերջը :

Այդ երկու յարկերուն, տունին ու դպրոցին մէջ ձեզի տրուած կրթութեան առաջին պատուիրանն եղաւ, անշուշտ, ծնողասիրութիւնն ու մարդասիրութիւնը : Որովհետեւ, բարեկամներս, վստահ եղիք որ իրենց ծնողաց հանդէպ ապերախ գտնուող զաւակները չեն կրնար զօրաւոր մարդեր ըլլալ : Տղուն առաջին պարտականութիւնն եղող ծնողասիրութիւնը, նմանապէս առաջին պայմանն է բարոյականին, եւ հաւատացէք, որ ինչպէս ժողովուրդներու, նոյնպէս անհատներու մեծութիւնը իրենց բարոյականէն կը չափուի միշտ : « Պատուէ՛ քու հայրդ ու մայրդ, որ քեզի աղէկ ըլլայ, ու երկար կեանք ունենաս երկրի վրայ » կ'ըսեն Հին ու Նոր կտակարանները : Իսկ Սիրաքի իմաստութիւնը շատ գեղեցիկ կերպով կը պատկերացնէ այն բարիքներն ու օրհնութիւնները, զորս ծնողասէր զաւակները պիտի վայելեն : « Ով որ հայրը կը պատուէ, մեղքերը կը քաւէ, եւ ով որ մայրը կը փառաւորէ գանձ ժողոված կ'ըլլայ : Ով որ հայրը կը պատուէ, ուրախութիւն կը գտնէ, իր որդիներէն, եւ էր օրերուն՝ աղօթքը կը լսուի : Ով որ իր հայրը կը փառաւորէ, երկայնակեաց կ'ըլլայ : Տիրոջը մտիկ ընողը իր մայրը կը հանգչեցնէ . . . գործով ու խօսքով պատուէ հայրդ, որ անկէ օրհնութիւն գայ քու վրայ, որովհետեւ հօրը օրհնութիւնը որդիներուն տունը կը հաստատէ, եւ մօրը անէծքը հիմերը կը քակէ : Քու հօրդ անարգանքով մի' փառաւորուիր, որովհետեւ հօր անարգանքը փառք չէ քեզի : Մարդուս փառքը իր հօրը պատիւն կըլլայ, եւ որդիներուն նախատինքը մօրն անարգութիւնն է : Որդեակ, քու հօրդ ծերութեան օգնական եղիր, եւ զանիկա մի' տրամեցներ իր կեանքին մէջ, եւ եթէ խօսք հասկնալու կարողութիւնը պակսի, ներէ անոր, եւ քու ուժովդ մի' անպատուեր զանի : Որովհետեւ հօրը ողորմած եղողը Աստուծմէն չի պիտի մոռցուի : Քու մեղքերուդ համար քեզի չարիք պիտի դիզուի, եւ քու նեղութեանդ օրը գեղց պիտի յիշէ

մեասի համար, եւ ինչպէս տարութիւնը սառը կը հալեցնէ, նոյնպէս քու մեղքդ քեզ պիտի հալեցնէ: Աստուծոյ հայնոյիչ կըլլայ անիկա, որ իր հայրը կ'անարգէ, եւ իր մայրը բարկացնողը Տիրոջը անէծքը պիտի ընդունի. . . » (Գ. 4-18):

Այն երկուք ու կէս տարիներուն, զոր ձեզի հետ անցուցի իմ առաջնորդական պաշտօնիս բերմամբ, բաւական առիթներ ներկայացան ինձի, խօսքս ձեզ ուղղելու եւ մատնանիչ ընելու: ձեր բոլոր թերութիւնները: Ինչպէս միշտ, նոյնպէս այս առթիւ անաչառ պիտի ըլլամ ձեզի դէմ, երիտասարդ եղբայրներ, որովհետեւ համոզուած եմ, թէ հիւանդութիւններն ու անոնց պատճառները ծածկելով կեանքի յոյսը կը կորսնցնենք:

Հիմա դուք սա ձեր վիճակովը կը նմանիք Եսաւին, որ իր անդրանկութիւնը վաճառեց սուրբ հատիկով մը, Անդրանկութիւնը՝ հին ատեններ՝ ընական օրհնութիւն մըն էր ծնելութենէ սահմանուած. Եսաւ իր յոռի ընաւորութիւնով չը կրցաւ գնահատել զայն, եւ անօթի վայրկեանի մը մէջ իր մարմինին յագուրդ տալու համար վաճառեց զայն: Դուք ալ, երիտասարդներ, միեւնոյն բանը կ'ընէք շարունակ: Տիրոջը ձեզի պարգեւած շնորհները կը փոխանակէք խաղամոլութեան, արբեցութեան, ու շուայտութեան հետ, ձեր մարմինին վայրկեանական հաճոյքները նախամեծար համարելով ա'յն օրհնութիւններէն, որոնք մշտնջենապէս կենդանի պիտի պահէին ձեր մէջ ազնիւ ու առաքինի կեանքի մը բողբոջները, գեղեցիկ գաղափարներու մշակութիւնը թողած լիտի կեանքի մը բաժինն ընտրած էք ձեզի,՝ նուիրական նպատակներու ձգտումէն հեռացած, խօլ բաղձանքներու գերին դարձած էք: Տէր Յիսուսի ձրիատուր շնորհները ոտքի տակ առած, ձեր առողջութեան, ձեր դրամին, ձեր աշխատութեան, ձեր ժամանակին ու ձեր պատիւին գնով մոլութիւններ ծախու կը գնէք, ու ասանկով կը մշտնջենաւորէք անդրանկութիւնը ծախող Եսաւին հօրամոյն սերունդը:

Եթէ երբէք, իմ եղբայրներս, ձեր վրայ տեսնուած թերութիւնները վաղանցուկ բաներ եղած ըլլային, թերեւս չխորհէինք իսկ անոնց վրայ. բայց առակը կըսէ. «Ունակութիւնը

երկրորդ ընտելութիւն կ'ըլլայ»: Ձեր ու մեր անհոգութիւնով օր մը այդ թերութիւնները ձեր ընտելութիւնը պիտի կազմեն. օր մը պիտի բխանան պիտի չորնան ձեր մէջ մոլութիւններէն խեղդուած առաքինութիւնները. օր մը թերեւս բաղձաք առաքինի ըլլալ, բայց ձեր կարողութենէն վեր պիտի դանէք զայն. ձեր սկար ուժերը ու առաքինութեան խանդարուած հրապոյրը ձեզի չպիտի օգնեն ընաւ վերստին դառնալու համար անդրանկութեան իրաւունքին ու օրհնութեան, զոր Յակոբ իրաւամբ ու արժանիքով պիտի յախշտակէ ձեզմէ: Ընդունելի ժամանակը հիմա է ձեզի համար, երբ ճամբան կարճ է, ու ձեր հոգիները դեռ չեն ապականուած ամբողջովին: Սրտի կատարեալ զղջում մը, կամքի զօրաւոր եւ վճռական տրամադրութիւն մը բաւական պիտի ըլլայ ձեզի դարձնելու ձեր անդրանկութեան իրաւունքը: Գիտեմ, եղբայրներս, բաւական դժուարին է այս դարձը, բայց անկարելի չէ ընաւ: Կ'արժէ ամեն ձիգ ու ամեն զոհողութիւն յանձն առնուլ վերադարձին ճամբան դանելու եւ հարթելու ա'յն արգելքները, որոնք այսօր ձեզի դէմ կը գըտնուին: Ասոր համար պիտի կուռիք ձեր մէջ եղած մոլութիւններուն դէմ. պիտի մաքառիք, պիտի քրոնիք, եւ առաջին օրերուն դժուարութիւններ պիտի կրէք, որովհետեւ պիտի պաշտէք ձեր այրած առաքինութիւնները, եւ պիտի այրէք ձեր պաշտած մոլութիւնները: Բայց վստահ եղիք որ այս ներքին կուռը օրհնութիւն մըն է, առաքինութիւն մըն է. « ով որ կեանքի դժուարութիւններուն հետ չէ՛ կուռած, անոր ինչ արժէք ունենալը չգիտեր »: Առանց այս վերադարձին, դուք, երիտասարդներ, օր մը հայր պիտի ըլլաք ապականուած սերունդներու եւ մեռած հոգիներու, պատասխանատու ձեր եւ ձեր սերունդներու ապականութիւններուն:

Ինչո՞ւ անգամ մը գէթ նկատողութեան չէք առնուր ձեր դժպիտի կացութիւնը. ինչո՞ւ չէք աշխատիր ըմբռնել ահաւորութիւնը վախճանին, ուր կ'առաջնորդէ ձեզ ձեր բռնած ճամբան: Ես իբր ձեր բարեկամը, եւ իբր բարեկամը ձեր հոգիներուն, կը փափաքիմ օգնել ձեզի ձեր բարոյական անկուսիք մէջ, ու



դուք ունեցէք զէթ սրտի պատրաստականութիւնը ձեր ինկած վիճակէն վեր բարձրանալու :

Մարդա, իր երիտասարդութեան չըջանին մէջ մանաւանդ իմացական ու բարոյական ներդաշնակութեան մէջ պահող քանի մը պարտաւորութիւններ կան, որոնք եթէ զարգանան ու կատարելագործուին, այն ատեն դաշնակի մը կամ քնարի մը չափ անուշ պիտի ըլլայ մեր կեանքին երաժշտութիւնը : Այդ պարտաւորութիւններն են կրօնասիրութիւն, բարեսիրութիւն, ընթերցասիրութիւն եւ աշխատասիրութիւն : Վերցուցէք ասոնցմէ մին կամ միւսը, եւ այն ատեն խանդարած պիտի ըլլաք կեանքին հաւասարակշռութիւնը :

Սխալած չպիտի ըլլամ, եթէ ըսեմ որ այս բոլոր պարտքերը մէկգի թողած էք դուք : Քանի՞ անգամ՝ ձեր քեանքի օրերուն՝ զգացած ունիք հաւատքի քաղցրութիւնը ձեր հոգիներուն խորը, քանի՞ անգամ ձեր մխիթարութիւնը վնասուցիք Ս. Գրոց ներշնչութիւն մէջ . քանի՞ անգամ ձեր տկար սրտերը զօրացուցիք աղօթքի ուժով, քանի՞ անգամ՝ ձեր փորձութիւններու ատեն՝ Աստուծոյ շնորհին դիմեցիք : — Թերեւս, ընաւ, որովհետեւ ցարդ չի կրցիք կամ չուզեցիք ըմբռնել, թէ հացի ու սնունդի չափ կարեւոր ու անհրաժեշտ սնունդ մըն է հաւատքը, որ կը մխիթարէ, կը յուսադրէ, կը քաջալերէ ու կը զօրացնէ : Ես տեսած եմ ձեզմէ շատեր, որոնք պզտիկ նեղութիւններու առջեւ տկարացած են սրտով ու հոգիով . տեսած եմ ուրիշներ, որոնք նոյն խակ կեանքէն ձեռք քաշել փորձած են երիտասարդութեան հասակին : Ասոնք այնպիսի երեւոյթներ են, որոնք հաւատքի պակասութեան պատճառաւ ի յայտ կու գան :

Քանի՞ անգամ՝ ձեր կեանքի օրերուն՝ զգացած ունիք ողորմութիւն մը տալու երանաւէտութիւնը . քանի՞ անգամ դուք ունեցաք ձեր աղքատ ու բախտէն անարգուած եղբայրներուն վրայ . քանի՞ անգամ որբի մը կամ այրիի մը սգաւոր երեսը խնդացուցիք, քանի՞ անգամ անկողին մտաք բարեսիրութեան մը պարտականութիւնը կատարած ըլլալու գոհունակութիւնով :

Կեանքէն կը զգուիք, անոր համար որ ձեր օրերը զուրկ կը մնան ողորմութեան երանութենէն ու օրհնութենէն : Չէ՞ք կարգացիր առաքելալին խօսքը . «Երանելի է մանաւանդ տալը քան առնուլը» (Գործք. Ի. 35) : Գացէք, հարցուցէք խելքը գլուխը եւ ինքզինքը ձանչցող աղքատներուն, ու մուրացիկներուն մանաւանդ, թէ հոգեկան ի՞նչ փոթորիկներէ եւ սրտի ի՞նչ պատառումներէ վերջ համարձակութիւն կ'ունենան իրենց ձեռքն երկնցնելու այն պատառ մը հացին, զոր ուրիշներ իրենց կուտան : Աղքատին ու մուրացիկին այդ վիճակը բաղդատեցէք տալու երանութեանը հետ, ու ինքնին պիտի համոզուիք, թէ ողորմածութիւնը պէտք մըն է կեանքը սիրելու համար : Մինչեւ հիմա որչա՞փ զրկեր ենք մեր անձերը, մեր սիրտն ու ձեռքը խփելով : Վստահ եղիք, որ ողորմասիրութիւնը՝ մեր միւս կարողութիւններուն պէս, չի գործածուելով պիտի աւրուի, ու մենք օր մը ծայրայեղ արծաթասէրներ պիտի ըլլանք, գիտնալով հանդերձ, թէ «բոլոր չարիքներուն արմատը արծաթասիրութիւնն է» : Գէշ կերպով վաստկուած ու գէշ կերպով վաստուած դրամը օրհնութիւն մը չըլլալէն զատ ապականութեան աղբիւր մը կ'ըլլայ մարդուս համար :

Քանի՞ անգամ՝ ձեր կեանքի օրերուն՝ վայելած ունիք ընթերցանութեան մը օգտակար ու շինիչ հաճոյքը . քանի՞ անգամ մտադիր եղաք ձեր պարասոյց ժամերը շահեկան ու պիտանի գրուածներով ճոխացնել . քանի՞ անգամ ձեր սիրտն ու միտքը ազնուացնելու համար դրքեր գնեցիք . քանի՞ անգամ օրաթերթի բաժանորդ գրուեցաք : Ընթերցասիրութեան թողած պարասը անդունդի չափ խոշոր է մեր մէջ : Եւ աւելի մեծ ամօթ մը, ձեռքս կը դողացնէ, ու կը դժուարացնէ զիս խոստովանելու այն տխուր ճշմարտութիւնը, թէ մեր Առաջնորդական վիճակին մէջ, ուր 16-17 հազար ժողովուրդ ունինք, չի գրտնուիր հարիւր Աստուածաշունչ, իբր գիրք տուներու ընթերցանութեան, աղօթքի ու մխիթարութեան :

Գրքերու եւ օրաթերթերու օգտակարութեան վրայ ստէպ խօսեցայ ձեզի, բայց մեր յորդորներն ձեր մէջ չկրցին արթն-

ցնել բաղձանքի նոր գրգիռ մը . որովհետեւ զուրկ գտնուեցաք զնահատեղու այն կարողութեանէն , թէ լաւ ու խնամքով ընտրուած գրքերը հաւատարիմ ընկերներն են մարդուն : Երկտասարդ եղբայրներս , աչքերնուդ առջեւ բերէք ձեր պարսպոյ ժամերը , յիշեցէք այն աղտոտ խօսակցութիւնները , զորս կունենաք ձեր փողոցի ընկերներուն հետ , անոնցմէ ինչ շնորհ եւ ինչ օրհնութիւն վայելած ունիք : Ընդհակառակն , մտադրեցէք , գէթ փորձի համար , ձեր պարսպոյ ժամանակը եւ ձեր սուտ հաճոյքի ու մոլութիւններու համար վատնած դրամները յատկայնել այն տեսակ գրքերու , որոնք ազգեն ձեր բարոյականին վրայ , ու զձեզ տանին զնեն մարդկային ընկերութեան ամենէն մաքուր շրջանակներուն մէջ , աւելի այն ատեն պիտի զգաք ընթերցասիրութեան առթած մխիթարութիւնը , եւ պիտի ախտաք ձեր նախորդ կեանքի ունայնութեանը վրայ : Ասանկով պիտի զնահատէք , ո՛չ միայն ժամանակը , այլ եւ ձեր կեանքը , իր բարեբաատիկ կոչումին ու արդար բաղձանքներուն մէջ : Ասանկով պիտի կրնաք հեռանալ ո՛չ միայն անպարկեշտ ընկերակցութիւններէ , եւ մարմինն ու հոգին ապականող ծուլութենէն , այլ եւ ուրիշներուն բարի օրինակ պիտի հանդիսանաք : Այն ատեն աշխատասիրութիւնը ձեր սեփականութիւնը պիտի ըլլայ , ու ձեր վայրկեաններն անգամ լիութիւն եւ շնորհ պիտի բղխեն : Աշխատասէր ընթերցանութեամբ պիտի յտակի ձեր լեզուն , պիտի առատանան ձեր գաղափարները , պիտի լուսաւորուին ձեր խորհուրդները , դատելու արժանիքին պիտի տիրանաք , եւ հաւատքով ձեր սիրտն ու հոգին աւելի ամրիժ պիտի զգաք ձեր մէջ :

Տիտիթէոս Դիդըրոմ իր «սո երիտասարդս» գրած նամակներուն մէջ , երիտասարդները շոգեկառքի կը նմանցնէ . «Դուք եւս երիտասարդներ շոգեկառք մըն էք . դուք ալ կը շարժիք ձեր ներսը դրուած ուժով մը : Դէպի առաջ երթալու համար եղած էք դուք : Եւ իրր մեքենայ շատ գերազանց էք շոգեկառքէն : Շոգեկառքին արարիչը մարդն է . մինչ մարդուն արարիչն է Զեր արարիչը . . . : Եւ արարիչը որ ձեզ ստեղծեց ,

որ ա՛յնչափ սքանչելի մեքենայ մը շինեց , եւ շարժիչ ուժ դրուանոր մէջ . միթէ անոր յատուկ ճամբայ մը չի սահմանե՞ց . . . : Ես կրօնքը կը նկատեմ իրր երկաթուղի մը , մարդկային շոգեկառքին , որ իր ճամբէն դուրս ելնող շոգեկառքին պէս պիտի ջախջախուի ժայռերուն վրայ , եւ պիտի թաղուի աւազին մէջ , եթէ բանականութեան ճամբէն չեղելով լոկ կենդանական ուժին յարմարող ճամբէ մը քալէ » :

Մեր հոգիին շոգեկառքը շեղած է իր երկաթուղիէն , ու մեր մարմինները պիտի խրին օր մը , աւազուտին մէջ , որ մեզի իրր Գերեզման սահմանուած է : Ուղղենք մեր ճամբան ու մեզի զօրացնենք հաւատքով , ողորմութիւնով եւ ընթերցասիրութիւնով , որպէս զի ասոնցմով գոհացած , իրաւունք եւ համարձակութիւն ունենանք ըսելու .

« Բաւական է , Տէր որ քու առջեւդ շնորհ գտայ » :

Ե.

Շատ մարդեր կան աշխարհի մէջ , բայց ամեն մարդ միեւնոյն արժէքը ու միեւնոյն դիրքը չը կրնար ունենալ հանրութեան ու անոր կարծիքին առջեւ . զնահատու՞մի աստիճանաչափ մը կայ , որ հիմնուած է վարքի ու մտաւոր կարողութեան վրայ : Այս ինչը մարդ է , որովհետեւ պատիւ ու խելք ունի , կըսենք : Այդ պատիւին ու խելքին , կամ ըսենք մարդկութեան ձուլարանն է դպրոցը . որ՝ ընական կարգով՝ ամենամեծ օժանդակն է ընտանիքին :

Դպրոցը տաճար մըն է լոյսի ու կրթութեան , ուր քահանայի պաշտօնը կը կատարեն դասատուներ կամ վարժապետներ : Երկրորդ ընտանիք մըն է դպրոցը , առաջինէն մեծ ու նուիրական , ուրկէ ամբողջ ժողովուրդի մը , քաղաքի մը , թաղի մը , կամ գիւղի մը մարդկութիւնը պիտի ծնի : Դպրոց չի-

տեսնող տղան, կը նմանի հում աղիւսին, որ դեռ չէ՛ թրծուած բրտաներու փուռին մէջ, եւ հետեւաբար չի կրնար գործածուիլ գեղեցիկ, մեծ ու հաստատուն շէնքերու: Պէտք կա՞յ արդեօք ներդրներ հիւսել դպրոցին ու անոր մատուցած ծառայութիւններուն համար: «Գաստիարակութիւնն է որ մարդը մարդ կը չինէ» . կրտէ ժիւլ Սիմօն, ա՞նա դպրոցին ներքողը:

Մարդկային ընկերութեան բարեկարգ կազմակերպութեանն ի վեր, անհատները իրենց սեփական արուեստը ու մասնաւոր զբաղումները ունեցան: Աշխատութեան բաժանումը աշխարհի յառաջդիմութեան պատճառն ու արդիւնքը եղաւ միանգամայն: Հայրը զգաց, թէ ինք՝ շուկայի կամ դաշտի կեանքով զբաղուած, պէտք եղածին չափ չպիտի կրնար հոգ տանիլ իր զաւակներուն կրթութեանը, քանի որ մանաւանդ դաստիարակելու մասնագիտութիւնը կամ կոչումը կը պակսէր իր մէջ: Բայ աստի, եթէ դպրոցներ գոյութիւն ունեցած չըլլային, ու կրթութիւնը սահմանափակուէր տունին մէջ, թերեւս այսօր անձանաչ մարդկութիւն մը տեսնէինք մեր շուրջ: Այն ատեն, իւրաքանչիւր հայր կամ մայր իր մտաւոր կարողութեան կամ անկարողութեան չափով պիտի աշխատէր քանի մը հինցած ծանօթութիւններ հաղորդել իր տղուն, ցիրուցան գաղափարներով, կրթութիւնը իր աւանդական նեղ շրջագծէն դուրս չը պիտի կրնար ելնել, իսկ իւրաքանչիւրին ընտանիքի, խառնուածքի եւ նկարագրի ներգործութիւնը բազմերանգ ու իրարու բացարձակապէս աննման անհատներով պիտի ճոխացնէր աշխարհը, նման թատերաբեմի մը, ուր զգեստներն ու դէմքերը կը փոխուին կատարուելիք դերին կամ ներկայացուելիք խաղին համեմատ: Առանց դպրոցի, հարուստն ու աղքատը, անջատ խումբեր պիտի կազմէին առանց իրարու հանդիպելու, եւ տիտղոսներն ու բացառիկ դիրքերը չառ կանուխէն պիտի աղդէին մանուկ սերունդներու վրայ, եւ պիտի խանդարէին ընկերական հաւասարակշռութիւնը:

Գասատուն դպրոցին մէջ մասնագէտ մըն է իբր ուսուցիչ, որուն պաշտօնն է համերաշխ կրթութեան մը մէջ ձուլել զա-

նազան դասակարգերու մանկութիւնները, եւ զիրենք պատրաստել ապագայ կեանքին, խորհուրդներու մութ առեղծուածին, ուր իւրաքանչիւր անհատ իր կոչման համաձայն պաշտօն մը պիտի կատարէ արդիւնաւոր ու մխիթարական՝ ընտանիքներուն, հետեւաբար մարդկութեան համար: Գասատուին մասնագիտութիւնն է նաեւ մշակել մտքերը, ինչպէս երկրագործն ու պարտիզպանը կը մշակեն հողեր՝ արդիւնաւետելու համար, եւ զանոնք ընդունակ ընել արուեստագիտական ու վաճառականական ձեռնարկութիւններու, ի մի բան, կեանքի պայքարին, որ յառաջդիմութեանն զատ ուրիշ նշանաբան չունի: Գասատուն, սակայն, հայր մըն է դպրոցին մէջ, որ խանձարուրն է՛ ապագային. եւ ա՞նա թէ ո՞ւրկէ կը ծնի պաշտօնին դժուարութիւնը. — հայր ըլլալ հարիւրաւոր զաւակներու, եւ միանգամայն յանձն առնուլ կրթութեան գործն անոնց, որոնք՝ դեռ մանուկ՝ անգիտակցօրէն իրենց հետ կը բերեն արիւնի, խառնուածքի, նկարագրի, մտքի, սրտի ու իմացականութեան անհուն զանազանութիւնները: Գասատուին մէջ հայրական գուրգուրանքէն զատ խորին հմտութիւն մը պէտք է, ուսումնասիրելու մանուկներուն հոգեբանութիւնը, այդ խառնակ զանազանութեանն մաքուր ներդաշնակութիւն մը ծնցնելու եւ անհատներու ու ժողովուրդներու ապագան շինելու համար: Երբ մարդիկ ամուսին մը ընտրելու մէջ դժուարութիւններ կը կրեն, հապա որչա՞փ աւելի պիտի ըլլան այն դժուարութիւնները, երբ կարգը մեր տղաքներուն ու աղջիկներուն դասատու մը ընտրելուն գայ:

Այս ընտրութեան գործը նկատուողութեան չէ՛ առնուած ցարդ, անոր համար որ միշտ «աւելի աժանը» փնտոեցինք, ու մեր դպրոցները անգործ մարդերու կայան շինեցինք, անոր համար, որ ամեն հանգիստով՝ որ իր թշուառութիւնը յայտնեց մեզի՝ ըսինք, «եկուր մեր տղաքը կարդացուր»: Քաղաքացիներ, գացէք, հարցուցէ՛ք գիւղացիներուն, որոնք երբ իրենց կովերուն կամ ոչխարներուն հովիւ պիտի վարձեն, պէտք կըլլայ երբեմն որ գիւղէ գիւղ հովիւ փնտոելու ելնեն, ու անոր

բարեոք ծառայութիւնը երաշխաւորութեան տակ անդամ կ'առնուն : Մենք այդչափ ալ չըրինք մեր զաւակներուն համար, ու տեսակ մը սխալ ու անբարոյական գլխաւորութեամբ մեր զաւակներուն մէջ խեղդեցինք յառաջդիմութեան սերմը :

Օր մը քանի մը հոգի ներկայացան ինծի . «Վարդապետ, ըսին, մեր այս ինչ դրացին 5-6 անգամէ բազկացած ընտանիքովը նիւթապէս խեղճ վիճակ մ'ունի . ինք մարմինով տկար ըլլալուն գործաւորութիւն չկրնար ընել, մանուսայ գործել չգիտեր, որ տունը ապրեցնէ, քիչ մը գրել կարդալ գիտէ, կը խնդրենք որ ասիկա վարժապետ ընես : Գպրոցներէ մէկուն մէջ, որպէս զի քու շնորհիւդ հաց մը ուտէ» :

Այս տեսակ դիմում մը զարմանք չպատճառեց ինծի . այն ցաւը՝ զոր կ'ըզայի, չուզեցի յայտնել անոնց, որոնց տարօրինակ պիտի թուէր այն : Խեղճ մարդերը, դրացիի մը զաւակները ապրեցնելու համար, ամբողջ սերունդ մը ապակամներու կը դիմէին անգլխտակցօրէն, քանի մը հոգիի հացը պատրաստելու համար ամբողջ ժողովուրդ մը անօթութեան ճամբուն կ'առաջնորդէին բարեմտութեամբ : Բայց ինչո՞ւ մեղադրէի այս մարդիկը, երբ ամեն կողմ դրեթէ միեւնոյն երեւոյթն է որ ի յայտ կուգայ մեր գպրոցական կեանքին մէջ : Եւ եթէ այս եղած չըլլար մեր ընթացքը, հիմա բաւական զարգացած ժողովուրդ մը եղած պիտի ըլլայինք :

Երկրորդ ու զլխաւոր պատճառը, որ մեր գպրոցները կը զրկէ արդիւնաւոր ըլլալու կոչումէն, սա է, թէ մենք տակաւին չենք կրցած ըմբռնել, որ տղու մը կրթութեան համար վճարելը մեր ամենէն մեծ պարտականութիւնն է : Իմ պաշտօնաւարութեանս երկուքուկէս տարուան ընթացքին մէջ, մշտենջենական կռիւ մը ունեցանք ձեզի հետ, գպրոցական խնդրոյն առթիւ : «Թող գպրոցները արդիւնք ցուցնեն, որ դրամ վճարենք» . ահա ձեր ամբողջ աւարկութիւնը, զոր ձեզմէ ամենէն տկարն անգամ ճարտասանական ձեւով կ'արտասանէր, իր դատին մէջ յաջողած մարդու մը եռանդով : Բայց ինչո՞ւ չը կրցիք ըմբռնել, թէ գպրոցներու յառաջդիմութիւնն ու արդիւ-

նաւորութիւնը կախում ունի վճարուած դրամէն, «վճարեցէք ու պիտի վայելէք արդիւնքը, որովհետեւ վճարողն է որ հոգ կը տանի դասատուի ընտրութեան» . Ահա իմ առաջին ու վերջին պատասխանս : Կրթական յառաջդիմութիւնը, որ ժողովուրդներու կեանքը կը մնուցանէ, եւ անոնց իրաւունք կուտայ աշխարհի մէջ տեղ մը, դէրք մը գրաւելու, պէտք է ունենայ իր հաստատուն ու գոհացուցիչ պիւտճէն : Բոլոր զարգացած ազգերը, եթէ երբեք կրցին հասնիլ իմացական բարձր կարողութեան, ճարտարարուեստի գիւտերու, եւ կրցին գտնել ընկերաբանական ուսումնասիրութիւններու բանալին, պատճառն այն էր, որ անոնք փորձով համոզուեցան, թէ կրթութեան համար ծախսուած դրամն է միայն, որ իրական ու տեսական արդիւնքներով կ'օժտէ մարդս : Եթէ պատեհութիւն ունեցած ըլլայիք, ի՞մ եղբայրներս, աչքէ անցնելու Եւրոպական զարգացած ազգերուն կրթական վիճակագրութիւնները, պիտի տեսնէիք թէ ի՞նչ ահագին ու անբացատրելի անդունդ մը կայ անոնց վճարման ու մեր վճարումին միջեւ : Բայց ի՞նչ հարկ վիճակագրութիւններ քրքրելու, արդէն մեր ունեցած յետադիմութեան եւ անոնց օր ըստ օրէական յառաջդիմութեան միջեւ գտնուած ահուկի տարբերութիւնը ամեն բան կը հասկցնէ մեզի . . . : Միայն, որպէս զի դուք ու բոլոր մարդիկ գաղափար մը կազմէք, թէ ի՞նչ է մեր քաղաքի գպրոցներուն վիճակը, հոս ամիտի հաշիւ մը պիտի տամ ձեզի : Քաղաքի գպրոցներուն վրայ խօսելով, միեւնոյն ժամանակ ցոյց տուած կըլլամ նաեւ գիւղերուն կրթական վիճակը :

Մեր քաղաքին մէջ 10 հազարի մօտ ժողովուրդ ունինք, այր, կին, տղայ, եւայլն . ունինք թաղային հինգ վարժարաններ, 600ի մօտ աշակերտ, որոց 100-120 աղջիկ . 11 պաշտօնեայ եւ 3 տնտես : Ընդհանուր գպրոցական պիւտճէնիս է 15,000 դրչ : Ուրեմն իւրաքանչիւր աշակերտի տարեթոշակին միջին հաշիւն է 25 դրչ : Որովհետեւ ընդհանուր պիւտճէին 8000 դրչ . քաղաքին սնտուկը կը վճարէ . ծնողքներ միայն 7000 դրչ . կը վճարեն, (մեծաւ մասամբ անվճար), հետեւաբար

ծնողքներու կողմէն խրատքանչլուր աշակերտի իրր տարեթոշակ կը վճարուի գրեթէ միայն 11 դրչ : Եւ չի մոռնանք ըսելու , թէ 13-14 տարեկան աշակերտները դուրս կելնեն դպրոցէն ծնողքներու ստիպմանը վրայ :

Այս հիւժած ու կամաք դարձած պիւտճէին մէջն ենք ամփոփեր , ուրեմն , մեր յառաջդիմութիւնը : Ասիկա անօրինակ այլասերութիւն մըն է , գանալէժ անկում մը բարքերու , որ եթէ շարունակուի , շատ տխուր ապագայ մը գուշակել կուտայ մեզի : Մեր հայրերն ու պապերը չա՛տ աւելի ունէին իրենց մէջ կրթութեան գործը գնահատելու կարողութիւնը . այն դպրոցները զոր ունինք , այն կալուածները զոր կը վայելենք , անոնց կը պարտինք . իսկ մենք զանոնք նորոգելու անգամ տրամադրութիւն ցոյց չենք տար : Հայրեր ու մայրեր . ի՛նչ կարժեն ձեր հողերը , ձեր տունները , ձեր դրամները , ձեր եկամուտները , ձեր ժամանակը , եթէ զանոնք օգտակարապէս գործածելու կարող զաւակներ չունենաք . ի՛նչ կարժեն ձեր ընտանիքները , ձեր զաւակները , ձեր սպասաւորները , ձեր գործաւորները եթէ անոնք մշակուած միտք ու զարգացած սիրտ չունենան : Դուք ձեր նիւթական հաշիւներուն մէջ խեղդուած տուգանքի մը չափ ծանր կը նկատէք դպրոցական տարեթոշակի մը վճարումը , այդ թոշակէն զերծ մնալու համար օրերով ու ամիսներով պարապ կը պտտցնէք ձեր զաւակները , ու կ'ամչնամ ըսելու՝ մինչեւ իսկ ձրի վարժարան փնտաւելով կրօնափոխութեան ձգտումներ ցոյց կուտաք : Ասիկա նախադինք մըն է , որ երբեք ձեր ձակոնէն չպիտի սրբուի : — Մեծ ու խոշոր սխալ մ'ալ ունիք դուք , որով չէք կրնար ըմբռնել , թէ քաղաքի մը կամ գիւղի մը զաւակները բարոյական տեսակէտով , ընդհանուրին սեփականութիւնն են . կը կարծէք թէ ինքզինքնիդ արգարացուցած կըլլաք , ըսելով , «Ես զաւակ չունիմ դպրոցին մէջ , հետեւաբար դրամ վճարելու պարտական չեմ » :

Այս բոլոր անպատեհութիւններուն պատճառը թերեւս ըլլայ այն , որ մենք բայարձակապէս անտես ըրած ենք մեր աղջիկներուն դաստիարակութիւնը : Մեր մայրերն ու մեր քոյ-

րերը չունին պէտք եղած այն զարգացումը , որ մեր տուներուն շնորհք պիտի բերէ : Եթէ մշակած ըլլայինք զանոնք , ու անոնց սիրտն ու միտքը դաստիարակած , հիմա մեր ընտանեկան ծախքերուն մէջ տեղ մը բռնած պիտի ըլլար կրթութեան տրուելիք դրամը : Մեր աղջիկները կրթենք ուրեմն աղքը կրթելու համար :

Մտածեցէք ու մենէ ամեն մէկը իր ամենէն պզտիկ տղուն տարեկան աւնուագն չորս Օսմ . ոսկի կը ծախսէ զգետի եւ ուտեստի համար : Մինչեւ որ մեր քաղաքին ու մեր գիւղերուն մէջ այդ ծախքին համեմատական մէկ չորրորդ բաժինը , այսինքն գէթ 1 Օսմ . ոսկի տրամադրելի չընենք մեր տղոց ու աղջիկներու կրթութեան գործին , չըսպասենք բնաւ ո՛չ յառաջդիմութեան եւ ո՛չ զարգացումի : Հիմա պարզապէս՝ դպրոց ունինք ըսելով՝ զիրար կը խաբենք , եւ այդ խաբէութեան սկզբնապատճառը դուք էք , հայրեր ու մայրեր , ձեր անտարբերութիւնն է , ձեր պարտազանցութիւնն է այդ պատճառը : Հիմա մեր դպրոցները , մեր աշակերտները , մեր վարժապետները իրենց կոչման ծառայելու մէջ չեն ընաւ . այնպէս որ աւելի լաւ պիտի ըլլայ կամ փակել դպրոցները , եւ կամ բարեկարգել զանոնք , եւ բարեկարգութիւնը կը պահանջէ դրամ , դրամ , դրամ : Այս ճամբաներէն ո՞րը կընտրէք ձեզի համար : Առաջին որոշման ատեն պէտք է համոզուիլ , թէ դպրոց մը փակելը եկեղեցի մը քանդելու չափ զգուելի է , գործ՝ որ մեզի պիտի վերցնէ մեր մարդկութիւնը . իսկ երկրորդ պարագային , կարող պիտի ըլլանք զարգանալ ու զարգացնել մեր սերունդները . զանոնք իրենց կոչման արժանաւոր անհատներ պատրաստել , եւ ասանկով վայելել արդիւնքն այն օրհնութիւններուն , որոնք լոյսէն ու զարգացումէն կը ծնին , եւ որոնք իրաւունք պիտի տան մեզի ըսելու .

«Բաւական է , Տէր , որ քու առջեւ չնորճ գտայ» :

Չ.

Երիտասարդներու հետ խօսած ժամանակս կը շեշտէի, թէ հացի չափ անհրաժեշտ ու կարեւոր սնունդ մըն է հաւատքը: Հիմա կը փափաքիմ աւելի ընդարձակել իմ գաղափարներս քրիստոնէական հաւատքի մասին, ցոյց տալու համար ձեզի, թէ ի՛նչ է անոր բնութիւնը եւ առարկան, եւ թէ ի՛նչ բանի մէջ կ'ամբիփուի անոր կարեւորութիւնը:

Հաւատք բառը շատ ընդարձակ նշանակութիւն մ'ունի մեր ու օտար լեզուներուն մէջ: Սակայն ո՛ր իմաստով ալ ըմբռնէք դայն, միշտ իր հետ ունի վստահութիւն մը, որ մարդս յառաջ կը վարէ անձանօթ խորհուրդներու կամ բնական գաղտնիքներու ծոցէն, թոյլ թալով անոր, որ մէկդի թողու երկիւղն ու տարակոյտը: Գիտութիւնը իր հաւատքն ունի, պատմութիւնն ալ ունի ի՛ր հաւատքը. իսկ մեր կրօնքը գիտութիւնն է մեր քրիստոնէական հաւատքին: Որչափ ատեն գիտութեան ու պատմութեան ծանօթ սահմաններէն դուրս անհուն աշխարհներ գոյութիւն ունենան, մեզի անձանօթ, ու գաղանխքները մութ քառսին վրայ ծփծփան, մենք բարեբախտաբար կամաւոր գերիները պիտի մնանք հաւատքին, քանի որ Աստուծոյ աչքը ու կատարելութիւնը կը պակսի մեզի: Հիմա մեր բացատրելիքը պիտի ըլլայ, կրօնական կամ փրկարար հաւատքը:

Հաւատքը հոգիին գիտակից կամ անգիտակից եռանդն է, որ կատարելապէս մարդս կը հպատակեցնէ Աստուածային պատուիրաններուն, եւ կը ձգտի իր տարտամ յուզումներէն դուրս ինքզինքը ապահովել գերազոյն գօրութեան մը հովանաւորութիւնով. կամ ինչպէս կրսէ Առաքեալը, «Հաւատքը յուսացուած բաներուն հաստատութիւնը, եւ չերեւցած բաներուն ապացոյցն է» (Եֆ. ԺԱ. 1): Մարդ՝ իր ամբողջ բանականու-

թեան լոյսէն ողողուած ատեն անգամ, յոյսերու եւ բաղձանքներու խառնուրդ մը պիտի ըլլայ միշտ. որովհետեւ աշխարհային կեանքին անկատարելութիւնը, գիտութիւններուն յաւիտենական մանկութիւնը, մեր ուժերուն տկարութիւնը, կատարելապէս տրամագիր ըրած են մեզ, մեր ուժէն, մեր գիտութեանէն, մեր խելքէն ու մեր կեանքէն վեր փնտռելու աւելի կատարեալը, եւ աւելի իմաստունը, որ կը տնօրինէ՝ աշխարհի բարիքին համար, եւ ահա այս պատճառաւ «Հաւատքը յաւիտեան պիտի մնայ» (Մկրտ. Խ. 12): Իմ եղբայրներս, ո՞վ պիտի պատմէ մեզի, կեանքի հակասական երեւոյթներուն մէջ՝ մարդու վախճանին ու Աստուծոյ արդարութեանն ու ողորմութեանը վրայ, եթէ ո՛չ, հաւատքը. ո՞վ պիտի մխիթարէ ցուած սիրտն ու ըզքտուած հոգին, ո՞վ պիտի հսկէ մեր մահուան անկողինին վրայ, ո՞վ պիտի ցուցնէ գերեզմանին անցքը, եթէ ո՛չ, հաւատքը. ո՞վ պիտի լուսաւորէ մեր գաղափարը ունեցած յոյսերնուս մասին, ո՞վ պիտի բանայ մեր առջեւ անձանօթին ճամբան, ո՞վ պիտի քակէ մեր հոգիներուն կապանքը, ո՞վ ոյժ պիտի տայ մեր թուլցած ոտքերուն, ո՞վ սրտերնիս պիտի մաքրէ, ո՞վ պիտի առաջնորդէ մեզ Յիսուսին, եթէ ո՛չ, հաւատքը: Աստուծոյ կատարելութիւնն ու սրբութիւնը հաւատքով միայն կուզան կը հասնին մեզի, եւ զմեզ կը թելադրեն իրեն նմանելու. «Կատարեալ եղիք, ինչպէս որ ձեր երկնաւոր հայրը կատարեալ է» (Մարտ. Ե. 48). եւ թէ «Սուրբ եղիք, կրսէ Աստուած, ինչու որ ես սուրբ եմ» (Ղև. ԺԹ. 2):

Աշխարհի պատմութիւնը հաւատքի պատմութիւն մըն է իր ծագման օրերէն սկսեալ, զէթ այնպէս ցոյց կուտան այն յարաբերութիւնները, զոր մարդիկ՝ հին ատենէն՝ ունեցան սուտ աստուածներու հետ: Բայց Աստուածաշունչը գերազանց պատմութիւնն է հաւատքին. անոր ամէն մէկ էջը, ամէն մէկ տողը հաւատքի մը ուժգնութիւնը կամ սաստկութիւնն է, որ ի յայտ կը բերէ, եւ մեզի ցոյց կուտայ, թէ ի՛նչ եղած են թոյլ հաւատքով մարդերը: «Անոնցմէ երեսս պիտի դարձնեմ, կրսէ Աստուած, եւ ցոյց պիտի տամ թէ ի՛նչ պիտի ըլլայ անոնց վախ-

ճանը , վասն զի անոնք թիւր ազգ մըն են , եւ որդիներ՝ որոնց մէջ հաւատք չի կայ» (Բ. Օր. ԼԲ. 20) . ցոյց կուտայ մեզի այն լուսաւոր դէմքերը , որոնք իրենց դարաւոր կեանքերուն խորէն տակաւին կը խօսին մեզի հետ , իբր հաւատքին մարմնացումը ու վկաները , որոնք Տիրոջը շնորհքին արժանացան : Եւ զիտէ՞ք , թէ «ընտիր հաւատքին համեմատ պիտի տրուի շնորհքը» (Իմաստ. Գ. 14) : Ուրեմն , ի՞նչ աւելի թանկագին ժառանգութիւն կամ կտակ , զոր հայր մը կամ մայր մը կրնայ թողուլ իր զաւակներուն . քան սա գերազանց պատուէրը . «Ողորմութիւնն ու հաւատքը թող չի պակսին քեզմէ , զանոնք քու պարանոցեդ կախէ , եւ սրտիդ մէջ գրէ՛ զանոնք» (Առաջ. Գ. 3) , որովհետեւ «Մոլորեալները չարիք կընեն , իսկ բարիները ողորմութիւն եւ ճշմարտութիւն . չարերը ողորմութիւն եւ հաւատք՝ չունին , բարիները միայն ունին հաւատք եւ ողորմութիւն» (Առաջ. ԺԳ. 22) :

Աբրահամ , որ զաւակը զոհելու կը տանէր , հաւատքով միայն կրցաւ յաղթել իր հայրական անդիմադրելի սիրուն , եւ կոչուեցաւ «Հայր հաւատոյ» . Մովսէս հաւատքով միայն արժանացաւ Տիրոջը համբոյրին տակ վախճանելու շնորհին . Դաւնիէլ առիւծներու գութին մէջ հաւատքով միայն կրցաւ ապրիլ . Երեմիա , որ ժողովուրդին բախտը լացաւ , հաւատքով միայն ներշնչում ընդունեց . Եղիա հաւատքով վերացաւ , ու Ենովք երկինք փոխադրուեցաւ առանց մահուան համբոյրն զգալու իր ճակտին վրայ :

Գրիտոնէութեան մէջ մանաւանդ կրօնական հաւատքը կրցաւ ժառանգել իր արդար ու օրինաւոր բաժինը , ուր հոգին ունեցաւ իր հաստատութեան կուռանը : Յիսուս իբրեւ աշխարհի վրկիչ , զձեց հաւատքին ճամբան , երբ ինքզինքը ցոյց տալով մեզի ըսաւ , «ես եմ ճամբան , ճշմարտութիւնն ու կեանքը» (Յով. ԺԳ. 6) , «իմ ետեւէս եկուր» (Մար. ԺԺ. 21) : Այս կոչումը օրհնութիւն մը եղաւ ու մարդիկ խոշոր քայլ մը առին դէպի Յիսուս , դէպի Աստուած մօտենալու , քրիտոնէական հաւատքը իբր սանդուխ գործածելով այն անհուն անջրպետին մէջ , որ զմեզ Աստուծմէ կը բաժնէր , եւ ուր առանց այդ սան-

դուխին մեր ոտքերը դնելու եւ քայլ մը առաջ երթալու տեղ մը չպիտի կրնայինք գտնել : Այն օրէն կեանքը սկսաւ զգալ սրբագործուելու պէտքը եւ գիտնալ անոր միջոցները , այն օրէն աշխարհ սկսաւ լուծուիլ իր կեղեւին մէջ , երբ միտքը սրախն ու հոգիին օժանդակութիւնով աւելի հեռուն լուսաւոր ու տեւական աշխարհի մը դռները կը տեսնէր . «Ինչու որ մենք հոս մնայուն քաղաք չունինք , այլ հանդերձեալը կը փնտռենք» (Եբր. ԺԳ. 14) : Իմ եղբայրներս , այդ աշխարհին դիւարը կը պարտինք մեր Տէր Յիսուսին , որ իր նաւը յառաջ վարեց երկրների խորերէն , կտրեց ձեղքեց մեղքերու ալեկոծութիւնը , ու դէպի ինկած , կորսուած մարդկութիւնն եկաւ , մեզ իրեն ժառանգակից ու եղբայրներ շինելու : Հիմա , ուրեմն , բացուած է մեր աշխարհին՝ յաւիտենական կեանքին , միխթարութեան , յոյսին՝ ճամբան : Պէ՛տք է քալե՛լ միայն : Այդ ճամբուն մէջ , հաւատքով զձուած , պիտի գնահատուի Մարտիրոսին նահատակութիւնը ու քրիստոնէայ վկաներուն խաչի ծանրութիւնը : Ո՛րքան անուշ է այն , մեր սա վիճակին մէջ երբ աշխարհիկ անկումը կը խոցէ մեզի , եւ երբ մեր հոգիները դանդաղ ու թոյլ մարմինին բոժոժը կը կրծեն : Աշխարհի անյոյս կեանքը հազիւ թէ բաւականութիւն ունի սարդի ստտայն մը շինելու մեր հաճոյքներուն ու մեր վայելքներուն իբր պատանք , մինչ հոգին հաւատքի անմահ ընդունարանը , բեհեզ կը չինէ մեր գոյութեան անվերջ ու անսպառ կեանքին իբր խանձարուր :

Կը յիշէ՞ք , եղբայրներ , Յիսուսի մէկ ճամբորդութիւնը , Գալիլիոյ ծովուն վրայ : Անոր նաւը գիշերին մութը կը ձեղքէր , երբ երկնքի աստղերը կը մարէին ծովակի ջրերուն մէջ : Յիսուս՝ երկնային խաղաղութիւնը , հրեշտակներու քունը կը քնանար նաւին մէկ կողմը : Առաքեալները՝ վարժ ձկնորս ու փորձ նաւաստիներ , յանկարծ տեսան փոթորիկին ծնունդը , որ կը սպառնար իրենց հոգիին ցնծումը խռովել ալեկոծութեան ցնցումով : Վտանգի մէջ էին իրենք , բայց Յիսուսի անդորրութիւնը տեղի չէր տուած ընաւ , Յիսուս կ'արթննայ իր քունէն , նայուածքին մէջ խեղդելու համար փոթորիկը եւ իր անուշ

ձայնին մէջ մարեչու համար ալեկոծութեան փրփուրները : Յիսուս ալ զարմացաւ փոթորիկին վրայ . ծովերու վրայ ճամբորդողը պէտք է սպասէ փոթորիկներուն , ալիքները վայելելու համար . պէտք է բնութիւնը ապրի ալիքին ու փոթորիկին մէջ , ինչպէս կ'ապրի ծաղիկին ու վարդին մէջ : Աշակերտները վախցած էին , իրենց սրտին խորը պահուած կասկածով ու երկամտութեամբ «Ո՛ւր է ձեր հաւատքը» (Ղ. 25) : Յիսուսին այս հարցումը աւելի տագնաոյ ներշնչեց առաքեալներուն քան թէ փոթորիկը , ալեկոծութեան աւելի սաստ ու յանդիմանութիւն պարունակելով : Հաւատքի գոյութիւնը երաշխաւորութիւնն է խաղաղութեան տեւականութեան , եւ սրտերու ամուր պարիսպը , քրիստոնէին վահանը , կեանքի պայքարին մէջ :

Դուք ալ ճամբորդներ էք , եղբայրներս , ու նոյն փոթորիկը ունիք ձեր ճամբուն վրայ , բայց «Ո՛ւր է ձեր հաւատքը» : Շատ անխելքութիւն բրած պիտի ըլլաք այդպէս ձեռնունայն ճամբայ ելնելով . «Ինչպէ՞ս կ'ըլլայ որ հաւատք չունիք» (ՄԳ. Դ. 40) : Ինչպէ՞ս եւ ինչո՞վ պիտի դանէք ձեր փրկութիւնը : Ինչո՞վ պիտի խափանէք փոթորիկը Ձեր սրտերուն , քանի որ հաւատքը տեղի սուեր է անտարբերութեան : Դուք հաւատքի վրայ կը խօսիք , առանց անոր մասին որոշ գաղափար կազմել ջանալու , ու հաւատքի անունով կը կեղծէք շարունակ : Ձեր գործերը երբեք չեն կրնար հաւատքին գոյութիւնը երաշխաւորել ձեր մէջ , այլ ընդհակառակը կ'ապացուցանեն սխուր իրողութիւնը , թէ ձեր գաղջ ու մեղկ հաւատքը՝ կենդանութիւնը կորուսած , զուրկ կը մնայ իր որոշ նպատակէն . «Ձեր հաւատքին համեմատ թող ըլլայ ձեզի» (ՄԳ. Թ. 29) : Ահա այս վճիռին տակ կ'ապրինք հիմա :

Վստահ ըլլանք , իմ եղբայրներս , թէ՛ որ կողմն ալ գայթի մեր սրտին ու հոգիին ուղղութիւնը , ո՛ւր որ ալ վարէ մեզ աշխարհին փոթորիկը , միշտ նոյն հարցումն է որ պիտի ուղղուի մեզի , «Ո՛ւր է ձեր հաւատքը» : — Ի՞նչ պիտի ըլլայ մեր պատասխանը այս հարցումին հանդէպ : Լուսութիւնը պատասխան չէ բնաւ , իսկ սխալ ու ասպականուած կեանք մը չկրնար ուղիղ պատասխանն ըլլալ հաւատքին :

Թող , ուրեմն , բացուին մեր սրտերը հաւատքի ներշնչումին առջեւ , եւ թող անով նորոգուած մեր մարմինները կենդանի տաճարներ ըլլան , լեցուն բարի գործերով , որպէս զի կարող ըլլանք ըսելու :

«Բաւական է , Տէր , որ քու առջեւ չնոր՝ դտայ» :

Է.

Քրիստոնէութիւնը երբ Աւետարանով քարոզուեցաւ աշխարհի , մարդիկ ու ազգեր՝ ուշ կամ կանուխ՝ դէպի անոր վազեցին , խաւարէն յոգնած , լոյսի ու կեանքի կարօտ : Ի սկզբան շատ փոքր էր քրիստոնէաներուն թիւը , ու անոնց մէջ խտիր չկար երբեք . հասարակաց եղբայրութիւնը՝ միասիրտ ու միակրօն՝ կը կազմէր բուն քրիստոնէական եկեղեցին : Հաւատքը իր թարմութեան ու լուսաւոր ողորումին մէջ խեղդած էր ժողովուրդներու տոհմային նկարագրին ոյժը , աւետարանական խմորով ձուլելու համար քրիստոնէաները առանց ազգի ու ցեղի տարբերութեան : Այդ խմորումին ատեն իրարու մօտ գտան ինքզինքնին տէրն ու ծառան , կինն ու աղախինը , եւ աշխարհի բոլոր անժառանգները ճանչցան թէ հոգեպէս իրաւունք ունէին հաւասար դիրք մը բռնելու քրիստոնէական սեղանին շուրջ : Սոյն ինքնաստեղծ դրութիւնը՝ սակայն՝ չպիտի կրնար պահել իր գոյութիւնը , որովհետեւ՝ Աւետարանին հիմը թէպէտ նոյն ամեն դարերու եւ ամեն ժողովուրդներու համար . ազգերը կը զանազանուէին իրենց խառնուածքովը ու նկարագրովը . այս եւ ուրիշ պատճառներով հետզհետէ կազմուեցան քրիստոնէութեան մասնաւոր ու տոհմային եկեղեցիները , իւրաքանչիւր աշխարհի ու ցեղի համաձայն : Այդ ժողովրդական եկեղեցիներէն մին է մեր Ուղղափառ Ս. Եկեղեցին , որուն հիմնադիրներն եզան Թագէոս ու Բարթուղիմէոս առաքեալները , եւ որուն ամենէն արդիւնաւոր վկան եղաւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ :



Հիմա, այս համառօտ ծանօթութենէն վերջ, կը փափաքիմ երկու խօսք ուղղել ձեզի իմ եղբայրներս, մեր տոնմային եկեղեցիի մասին, այդ — Եկեղեցի — բառին մէջ ամփոփելով մեր սեփական տաճարներն ու ժողովուրդը, քանի որ չենք կրնար եկեղեցիի շէնքը անջատել մեր հաւատացեալներու բաղմութենէն, որովհետեւ եկեղեցիին համանշանակ յունարէն բառն ալ, որ է եփեսոսի, իր մէջ կը պահէ այս երկու իմաստները միանգամայն: — Մեր մէջ գաղափարներն այնքան նիւթակահնացած են, ու ծէսը ա՛յնքան տիրապետեր է մեր ըմբռնումներուն, որ՝ գէթ մեր գործնական կեանքին մէջ՝ եկեղեցի բառով կըմբռնենք նիւթական շէնքը, քարը, փայտը այն հասարակաց աղօթարանին կամ ժողովարանին, ուր մենք կիրակիէ կիրակի կամ իրիկուն ու առտու կըհաւաքուինք մեր ժամերգութիւնները կատարելու եւ մեր քրիստոնէական խորհուրդները մատակարարելու: Բայց պէտք է զիմնաք որ եկեղեցիին մէջ Տիրոջը հաճելի եղածը ժողովրդեան սիրան է, հոգին է, որ գիտէ իր աշխարհիկ մտածումներէն անջատուիլ ու վերանալ մինչեւ աստուածային էութիւնը, անկէ ներշնչուելու, զօրանալու, մխիթարուելու, աղօթքի ուժով: Ահա այս պատճառաւ է որ երբ Ս. Պօղոս առաքեալ կը խօսի Քրիստոսի արիւնով գնուած մեր անձերու մասին. զանոնք եկեղեցիի կամ տաճարի կը նմանցնէ. «Չէ՛ք գիտեր, որ Աստուծոյ տաճար էք դուք, եւ Աստուծոյ հոգին ձեր մէջն է ընակած» (Ա. Կորնթ. Գ. 16. Զ. 19): Եւ Պետրոս առաքեալ կը պատուիրէ հեռանալ հին մարդէն, չարութեան ու սպականութեան մարդէն, եւ փափաքիլ անխարդախ կաթին, որպէս զի «Ինք ալ կենդանի քարերու պէս շինուիք հոգեւոր տաճար մը, սուրբ քահանայութիւն մը, Յիսուս Քրիստոսի ձեռքով Աստուծոյ հաճելի հոգեւոր պատարագներ մատուցանելու» (Ա. Պետ. Բ. 5): Մեր անձերէն վերջ մեր տուներն ալ մեզի համար առանձնայատուկ եկեղեցիներ են, ուր պարտաւորութիւն ունինք մեր սրբութիւնը պահպանելու, մեր հանապազորդ աղօթքներով. «Ուր որ երկու կամ երեք հոգի ժողովուած ըլլան իմ անունովս, ես հոն անոնց մէջն եմ» կըսէ

Յիսուս (Մատթ. ԺԸ. 20): Եկեղեցիի մը համար անհրաժեշտ է Յիսուսի ներկայութիւնը, որ միայն գիտէ իր շուրջը համախմբել հոգիները: Ուրեմն, քանի որ եկեղեցին ժողովուրդով կը կազմուի, մեր ալ տոնմային եկեղեցիին մէջ գոյութիւն պիտի ունենան միշտ առանձնական եկեղեցիները, որոնցմէ մին է մեր մարմինը եւ միւսը՝ մեր տունը:

Եկեղեցին ի՛նչ ձեւի մէջ ալ նկատուի, ըլլայ անձնական, ըլլայ ընտանեկան, ըլլայ հասարակական կամ ժողովրդական, երկու մասերէ կը բաղկանայ: Այդ մասերէն մին է վարդապետականը, ու միւսը՝ գործնական բարեպաշտութիւնը: Տոնմային մեր բոլոր եկեղեցիներուն մէջ վարդապետական մասը հաստատուն կը մնայ, նոյն ու նման ամենուրեք, հիմնուած աւետարանական հաւատալիքներու վրայ, որոնց հարկաւոր լուսաբանութիւնը կը տրուի տոնմային ու տիեզերական կոչուած ժողովներով: Մեր առաքելական Ս. Եկեղեցին ունեցաւ երեք տիեզերական ժողովներու (Նիկիոյ, Եփեսոսի, Կ. Պոլսոյ) վճիռները, ու տոնմային ժողովներու շարունակականութիւնը, ներքին ծիսական բարենորոգումներու համար: Տիեզերական ժողովներու աւելին կրնար մեր եկեղեցին ալ հեռայնել աւետարանական ոգիէն, ինչպէս հեռացուց միւս եկեղեցիները, իրենց քմահաճ սնօրինութիւններով: Ուրեմն մասնաւոր քաղաքներու եկեղեցիները կազմող հոյ հաւատացեալները իրարմէ կրնան տարբերիլ միմիայն իրենց բարեպաշտութեան, ողորմասիրութեան, աղօթասիրութեան ու կրօնասիրութեան աստիճանով:

Իմ եղբայրներս, մենք չենք կրնար այս աշխարհի կեանքի ատեն բաժնուիլ մեր մարմինէն, որ տաճարն է Ս. հոգիին. չենք կրնար բաժնուիլ մեր կիներէն ու մեր զաւակներէն, կամ ըսենք տունէն, որ մեր ընտանեկան տաճարն է: Միեւնոյն ըմբռնումով պէտք է մտածենք, թէ՛ ս՛րքան տգեղ ու անլայել զիրք մը ունեցած կըլլանք մեր տոնմային ու մայրենի եկեղեցիէն բաժնուելով, եւ ի՛նչ աւելի զղուելի գործ, քանի որ այդ բաժանումները նիւթական ու դրամական շահերու տեսակէտին վրայ հիմնուելով տեղի կունենան: Այսու մենք ինք

զինքնիս դատապարտած կըլլանք կամաւորապէս աքսորուելու  
 այն սուրբ ու նուիրական միջաւայրէն , ուր մեր եղբայրները  
 մեր հաւատքով , մեր նկարագրով ու մէ՛ր խառնուածքով կա-  
 ղօթեն ու կը սրբուին , եւ կը կազմեն եկեղեցիին ամբողջու-  
 թիւնը : Հաւատուրայ ըլլալը ամենէն նողկալի որոշումն է , զոր  
 մարդ կրնայ յղանալ իր տկար վայրկեաններուն մէջ , ա՛յն  
 ատեն , երբ իր մարմնական տաճարը ամայացած է ապականու-  
 թիւնով . « Թէ որ մէկը Աստուծոյ տաճարը ապականէ . Աստու-  
 ճոյ տաճարը , որ դուք էք » (Ա. Կ. Բ. Գ. 17) : Եկեղեցիի մը  
 ուրացութիւնն ալ միեւնոյն նողկանքն է , որ պիտի ազդէ  
 ամեն անոնց , որոնք հոգիով զգալ ու ըմբռնել զիտեն :

Գանք մեր բուն տաճարներուն :

Մարդ անձին տաճարը իր վեհութեան ու պայծառութեան  
 մէջ պահել կարենալու համար , պէտք է օր ըստ օրէ փնտռէ իր  
 կեանքին հաշիւը , խմանալու համար թէ արդեօք իր աւօրեայ  
 կեանքին մէջ ունեցած է յայտնի սխալներ , անիրաւ գործեր  
 կամ տգեղ հաշիւներ , որոնք իր մէջ խեղդեն հոգիին գոյու-  
 թիւնը , եւ ապականեն իր մարմնական տաճարին սրբութիւնը :  
 Անհատ մը՝ իբր առանձին տաճար քրիստոնէութեան՝ կրնայ  
 իբր ներկայացուցիչ հանդիսանալ աւետարանին , աւետարանիչ  
 մը ըլլալ պարզապէս , քանի որ գեղեցիկ ու մաքուր կեանք  
 մը , որ օծուած է հոգիով , ամենէն պերճախօս քարոզն է ուրիշ-  
 ներու համար , քանի որ գործերու բարերար ազդեցութիւնը աւե-  
 լի տեւականութիւն ունի քան խօսքի մը տպաւորութիւնը : Եւ  
 անա , թէ ինչո՞ւ կը յարգենք Սուրբերը , ու կը պատկառինք  
 անոնց յիշատակին ներկայութեանը : Չէ՞ք յիշեր , եղբայրներս ,  
 ո՛րչափ քարոզներ ապարդիւն մնացեր են իրենց տեսականին  
 մէջ , առանց գործնական հրահանգութեան : (Անցողաբար ըսեմ  
 որ ես ջանացի իմ քարոզներս անձիս օրինակաւ ապացուցանել  
 ձեր մէջ , ու եթէ երբէք անոնք օգտակար չեղան ձեզի , պա-  
 տասխանատուութիւնը աւելի ձեր մօտ փնտռեցէք : ) Բայց չի  
 մոռնանք որ գործնական կեանքը կախում ունի միշտ , պատ-

ուիրաններէ , որոնք գրաւոր ու բերանացի կ'աւանդուին մեզի :  
 Երանի պիտի ըլլայ այն մարդուն , որ զիտէ պատուիրաններու  
 գիրը հոգեկանացնել , եւ իրեն կեանքը կաղապարել անոնց  
 քաղցրութեանը եւ օծութեանը մէջ : Մենք ամենքնիս իբր  
 մարդ անշուշտ ունեցանք մեր տկարութիւնները , մեր թերու-  
 թիւնները , մեր հոգիին վրդովումները . բայց ձեզմէ՛ ո՞վ ունե-  
 ցաւ պատրաստականութիւնը մութին ու լոյսին մէջէն իր աղօթ-  
 քը բարձրացնելու դէպ ի վեր , ու հոգիին օժանդակութիւնը  
 ինդրելու իրեն համար . ձեզմէ՛ ո՞վ ունեցաւ աւետարանի ոգին  
 իր կեանքին իբր ուղեցոյց գործածելու հաստատուն որոշումը :  
 Ընդհակառակն , թողուցիք որ ձեր մարմինները փոշոտին , ու  
 քայքայուին ձեր անձնական տաճարները , դուք անոնց վրայ  
 շատ գէշ աչքով նայեցաք , պղծեցիք անոնց վեհութիւնը ձեր  
 յոռի ընթացքով եւ վատ ունակութիւններով . գոյցաք անոնց  
 հոգեկան իրաւունքները , եւ անոնց բարձր կոչումը հաճոյքի  
 ծառայեցուցիք , ու նմանեցաք այն փարիսեցիներուն , որոնց  
 երեսին ըսաւ Յիսուս . « Իմ տունս աղօթքի տուն պիտի կոչուի ,  
 ու դուք աւազակներու այր շինեցիք » (Մ. Բ. Ի. Ա. 13) : Ճանչ-  
 նանք մեր սխալները , ու մեր մարմինները սիրենք իբր հոգիի  
 տաճարներ , ու զարդարենք զանոնք բարի ու առաքինի գոր-  
 ծերով : Վստահ ըլլանք , թէ մեր անձնական տաճարներուն  
 մէջ միայն պիտի կրնանք՝ ինքնամիտի կեանքով՝ քրքրել մեր  
 գիտակցութեան խորը , քակել մեր գործերուն կծիկը , աշխար-  
 հի աղմուկէն հեռու , մարդերու նայածքէն զերծ , շուկայի  
 հաշիւներէն անջատ , փնտռել գտնելու համար մեր մարմինին  
 տկար կողմերը , եւ զանոնք մեր աղօթքով ու հոգիի լուս պաշ-  
 տամունքով նորոգելու կերպերը : Անհատական տաճարին սրբու-  
 թենէն կախում ունի ընտանեկան տաճարին ալ Սրբութիւնը ,  
 որովհետեւ բարի քրիստոնէայ մը կրնայ տունին բարի հայր  
 կամ մայր ըլլալ :

Ընտանեկան տաճարին փութկոտ խնամքը հիմա պակաս  
 է մեր մէջ : Կար ժամանակ մը , երբ մեր պապերը՝ իբրեւ տու-  
 նին մեծերը՝ իրենց շուրջ կը ժողվտէին տունին բոլոր անդամ-

ները, եւ գործի սկսելէ ու պառկելէ առաջ իրենց ընտանեկան պաշտամունքը կը կատարէին: Արեւին մուտն ու ծագումը անոնց համար զանգակէն աւելի կենդանի հրաւէր մըն էր ընտանեկան բարեպաշտութեան: Ո՞ւր մնային մեր տուներու այդ բարի սովորութիւնները: Հիմա մենք մեր քաղաքներու ու գիւղերու եկեղեցիները հիմնած, այնպէս կը մտածենք, թէ անոնցմէ դուրս այլեւս կը դադրի՝ մեզի համար՝ պաշտամունքի ու աղօթքի կարեւորութիւնը: Չէ՛, քրիստոնէայ եղբայրներս, ուր որ ալ տանիք ձեր մարմիններուն հետ ձեր հոգիները, անոնք պէտք է որ իրենց աղօթարանը ունենան: Եւ ի՞նչ աւելի նուիրական քան ընտանիքը, ուր հօր մը շուրջ կը խոնուին կին ու զաւակներ: Մարդուս նկարագիրը ընտանիքէն կը սերի, եւ պարկեշտութիւնն ու առաքինութիւնը ընտանիքին օրհնութիւնը կը շինեն: Մենք իբր քրիստոնէայ մեր պարտքերուն ճանաչումովը պիտի ապրինք շարունակ. ի՞նչ գեղեցիկ առիթ՝ մեզի համար՝ երբ այդ պարտքերը կը հատուցուին Յիսուսի ներկայութիւնով: Արդեօք Յիսուսի ներկայութիւնը գնահատած էք ընտանիքին մէջ: Ժողովեցէ՛ք ձեր զաւակները, դուք որ ձեր անձին տաճարին մէջ սրբուեցաք, ու գլուխ կանգնած բացէ՛ք անոնց սրտերը Աստուծոյ առջեւ. վստահ եղիք թէ ձեր անձին օրինակը աւելի զօրաւոր պիտի ըլլայ Ս. Գրոց ընթերցումներուն եւ ձեր ընտանեկան աղօթքներուն մէջ: Գոհութիւնը եւ մխիթարութիւնը պիտի ունենաք ամենքնիդ, մէկ հոգիէ ու մէկ շնորհքէ ներշնչուած, աւելի զիրար սիրելու, եւ սիրելու ձեր եղբայրները: Ընտանիքին մէջ միեւնոյն են ձեր ամենուդ շահերը, սէրերը, ախորժակները, միտումները. ինչո՞ւ միեւնոյնը չըլլայ ձեր հաւատքը: Ընտանեկան պաշտամունքի յարատեւութիւնը պիտի ստեղծէ ձեր մէջ հաւատքի նոյնութիւնն ու կենդանութիւնը, պահպանելու համար՝ միանգամայն՝ ընտանեկան կցորդութիւնը, քրիստոնէական կեանքով: Յետո, որ ընտանեկան պաշտամունքի գեղեցիկ օրինակը կընծայէ մեզի, ձերութեանը վերջին օրերուն Սիւքէմի մէջ իր մօտ ժողովեց Իսրայէլի բոլոր ձերերն ու ժողովուրդը, եւ ըսաւ անոնց. «Թէ որ Տիրոջը ծա-

ռայութիւն ընել ձեզի հաճոյ չերեւար, ընտրեցէ՛ք այսօր թէ զ՞ով պիտի պաշտէք, գետին անդիլի կողմը ձեր հայրերուն պաշտած աստուածները, թէ աստուածները Ամովրայցիներուն, որոնց երկիրը կը բնակիք դուք: Իսկ ես ու տղան Տէրը կը պաշտենք» (Յեւ. 17. 15): Դուք ալ ունեցէ՛ք, եղբայրներս, Յետուի պէս, ձեր տունով ու զաւակներով Տէրը պաշտելու տրամադրութիւնը, եւ ըսէ՛ք իսրայելացիներուն պէս. «Մենք ալ պիտի պաշտենք Տէրը, որովհետեւ անիկա է մեր Աստուածը»: Առանց ընտանեկան պաշտամունքի ձեր հրապարակային աղօթքները կեղծարարութիւնով չաղվուած պիտի ըլլան:

Իմ ընթերցանութիւններուս միջոցին հանդիպած եմ տարբրինակ գաղափարի մը, ուր հմուտ ընկերաբանը կըսէր. «Արուեստը կը յառաջդիմէ՛, արուեստաւորը կը յետադիմէ»: Այս յայտնուած գաղափարը՝ առաջին անգամ անհաւատալի թուեցաւ ինձի, սակայն հետզհետէ խորհուրդներս պարզուեցան այս մասին, ու համոզուեցայ թէ ի՞նչ ըսել կուզէր ընկերաբանը: Երբ արուեստական ճիւղը իր մասնագիտական ստորաբաժանումները չունէր, արուեստաւորը, օրինակի համար ժամագործը, կրնար ժամացոյցի մը սարքը պատրաստել ու առանց ուրիշին օժանդակութեան ժամացոյց մը մէջտեղ հանել միմիայն իր աշխատութիւնով, փոյթ չէր որ այդ ժամացոյցը քիչ մը տձեւ եղած ըլլար, քանի որ արուեստը յառաջդիմած չէր: Երբ արուեստը կատարելագործուեցաւ, ժամացոյցները աւելի նրբութիւն գտնել սկսան, միայն թէ արուեստաւորը այլ եւս չի կրցաւ ամբողջ ժամացոյց մը պատրաստելու բոլոր աշխատութիւնները յանձն առնուլ. այն ատեն մէկը սկսաւ անոր զսպանակները շինել, միւս մը անիւները եւայլն, մինչեւ որ քանի մը մարդերու ձեռքով ամբողջանայ: Ասիկա էր արուեստաւորին մը մարդերու ձեռքով ամբողջանայ: Ասիկա էր արուեստաւորին յետադիմութիւնը արուեստին յառաջդիմութեանը մէջ: Ընկերաբանին այս կարծիքը իմ միտքս շատ հեռուները փոխադրեց, ու գաղափարներու զուգորդութեամբ երեւակայել տուաւ ինձի մարդկային կրօնական պատմութեան հին ժամանակները, ուր ամեն անհատ կրօնական կոյր ու տղէտ հաւատքի մը պաշ-

տօնեայն կը հանդիսանար, ուր ամեն մարդ ի՛ր ու իր տունին հաշուոյն, զոհարար, քահանայ ու ծիսակատար էր, աղօթասաց ու միանգամայն քուրմ: Կրօնի այդ յետադիմութեան մէջ կրօնի—մարդը շատ յառաջդիմած էր իր պարտաւորութիւնները ճանչնալուն ու կատարելուն մէջ: Բրիստոնէութիւնը կրօնական կոյր տգիտութիւնը խափանեց, ու հաւատքը օժտեց աստուածային լուսաւորութիւնով, մարդկային կրօնական դադափարները զարգացան հեռզհեռէ ու յառաջդիմեցին. կրօնի—մարդը, սակայն, այդ ընդհանրական զարգացումին հանդէպ, իր պարտաճանաչութեան մէջ յետադիմեց, նման արուեստաւորին, որ կը յետադիմէ արուեստի յառաջդիմութեանը մէջ: Եթէ այս եղած չըլլար իրողութիւնը, իմ եղբայրներս, հիմա պէտք էր որ աւելի ջերմեռանդութիւն ցոյց տայինք մեր հասարակային պաշտամունքներու աստն ու մեր գործերուն մէջ: Հիմա դուք ընդհանրապէս եկեղեցին աղօթարան նկատելէ աւելի, ժամադրաւայր մը շինած էք աշխարհիկ տեսակցութիւններու եւ յարաբերութիւններու: Եկեղեցին ժամադրաւայր մըն է, ստուգիւ, ուր մենք պիտի հաւաքուինք, ո՛չ թէ խօսելու, խնդալու կամ անտարբեր դիտող մը ըլլալու, այլ մէկզմէկէ ներշնչուելով եւ մէկմէկու բարի օրինակ հանդիսանալով, աղօթելու եւ Տիրոջը գոհութիւն մատուցանելու համար: Եկեղեցին ինչ օրհնութիւններ պահած ունի մեզի համար: Այդ օրհնութիւններուն դռները փակ պիտի մնան շարունակ, որչափ աստն մենք չտոյլինք սիրել մեր եկեղեցին, եւ ճանչնալ մեր հոն ունեցած պարտաւորութիւնները: Ամենէն աննշան սեպուած երեւոյթը, որ այսօր ձեզի համար արժէք չունի, ձեր փրկութեան միջոցը պիտի ըլլայ հոն, ամենէն խորհրդաւոր Հաղորդութիւնը, որուն չէք ուզեր մօտիլ այսօր, ձեր քաւութեան ճամբան պիտի ըլլայ հոն, ամենէն աղքատ աղօթակիցը, ձեր ողորմասիրութեան աւելի պիտի ըլլայ հոն, ամենէն պարկեշտ կեանքը՝ ձեր հայելին պիտի ըլլայ հոն, ու ամենէն անտեսուած ու բանի տեղ չգրուած վայրկեանը շնորհաց տրիտուրը պիտի ըլլայ հոն եւ օրհնութեան աղբիւրը: Երբ եկեղեցիէն կը բաժ-

նուիք արդեօք կը զգամք ձեր մէջ նորոգութեան մը հետքերը. երբ Ս. Գրոց ընթերցուածներուն, աղօթքներուն, երգերուն, շարականներուն ու բնական քարոզներուն կը մասնակցիք ու կ'ունկնդրէք, քրիստոնէական նոր ու աստուածահաճոյ կեանքի մը թեւակոխելու դադափարն ու գրգիւրը կը զգամք ձեր մէջ: Ահա ասոնք են միջոցները տիրանալու ա՛յն օրհնութիւններուն, որոնք մեր սրտերը պիտի հանգչեցնեն, պիտի օժտեն մեզի սուրբ սրտով եւ ուղիղ հաւատքով հաստատուելու մեր կեանքին մէջ: Խօսքս մասնաւորելով, կը յանձնարարեմ մեր մայրերուն ու քոյրերուն, որպէս զի իբրեւ հանդիսաւայր չի նկատեն եկեղեցին, եւ հոն փակեն իրենց բերանները, սրտերնին բանալու համար, որպէսզի ունենան եկեղեցասիրութեան դօրաւոր ոգին, հրահանգեն իրենց զաւակները պարկեշտութեան ու առաքինութեան ճամբուն մէջ, իրենց անձին օրինակով, եւ անոնց սովորեցնեն իրենց միխթարութիւնը փնտուել մեր մայրենի Ս. եկեղեցիին ծոցը, ուր է մեր խաղաղութիւնը, մեր յոյսն ու հաւատքը: Ու դուք ամէնքնիդ, իմ քրիստոնէայ եղբայրներս, սիրեցէք ու յարգեցէք ձեր անձերը իբր կենդանի տաճարներ. պահպանեցէք ձեր մէջ քրիստոնէական ընտանեկան պաշտամունքներու ոգին. մի՛ մոռնաք ձեր աղօթքները, որոնց պարասեցէք անձանձրոյթ, ճանչցէք շարունակ եկեղեցի յաճախելու պարտականութիւնը, եւ մի՛ թերանաք ձեր բարեգործական տուրքերուն մէջ: Որպէսզի Տիրոջմով օրհնուած կարող ըլլաք բսելու:

«Բաւական է, Տէր, որ քու առջեւ շնորհ գտայ»:

Ը.

Աշխատասէր մարդը կը սպասէ իրիկուան, հանգչելու ու իր կորսնցուցած ուժերը նորէն գտնելու համար: Հանգչելու

պէտքը ա՛յնքան կարեւոր է, ո՛րքան անհրաժեշտ է աշխատե-  
լու հարկը . քանի որ աշխատութիւնը պայման մըն է, ուր մեր  
մարմինին ու մտքին ուժերը կը յոգնին, կը թուլնան ջղերը  
իրենց անընդհատ գործունէութենէն, ու կրնան խանգարուիլ  
չարաչար գործածուելով: Այդ խանգարման վնասը չկրելու եւ  
ուժերը միշտ թարմ ու զօրաւոր պահելու պէտքն է, որ սիր-  
ցուցեր է հանգիստը, որուն համը անձամբ կը մնայ ծոյլերուն:  
Օրական աշխատութեան չափն ու տեւողութիւնը ընդհանուր  
ու հաստատուն օրէնք մը չունին իրենց համար . եւ կը տար-  
բերին անհատներու կարողութեան եւ արուեստին ու աշխատու-  
թեան տեսակին համաձայն: Մէկը որ տկար է ու յոգնեցու-  
ցիչ աշխատութեան մասնուած, աւելի պէտք ունի հանգիստի,  
քան թէ ուրիշ մը, որուն կարողութիւնը տեղն է ու աշխատու-  
թիւնը թեթեւ: Բայց ամենքնիս ալ՝ առանց խորութեան՝ ուժի  
կամ աշխատութեան տեսակին, հաւասարապէս ունինք՝ շա-  
րաթուան մէջ օր մը, որ սահմանուած է մեր հոգեկան ու  
մարմնական յոգնութիւնները կազդուրելու: Աստուած անգամ  
աշխարհի արարչութեան ատեն ունեցաւ իր հանգիստը կամ  
շաքաթը, ու պատուիրեց մեզի որ «հանգստեան օրը» սուրբ  
պահենք (Ծննդ. Բ. 3 Եւ. Ի. 8, 9): Մովսիսական օրէնքը շա-  
րաթը սահմանեց իբր օր հանգստեան: Ծնորձքն ալ իր կող-  
մէն միաշարաթը կամ կիւրակէն նուիրագործեց. մին չօրը նուի-  
րեց հանգստեան օրը եւ միւսը՝ Որդիին, առաջինը՝ արարչա-  
գործութեան ու երկրորդը մարդկային փրկագործութեան խոր-  
հուրդով: Այնպէս որ քրիստոնէութեան առաջին օրէն կը տես-  
նենք Քրիստոնէայ հասարակութիւնը, որ փոխանակ շաքաթի՝  
կիւրակէն սուրբ կը պահէ, արժանաւոր յարգանք մը մատուցած  
Ըլլալու համար Յիսուսի Յարութեան:

Նոր կտակարանի պատմութիւնը մեզի ցոյց կուտայ, թէ  
առաքեալները կիւրակէ օրը կը կատարէին իրենց կրօնական  
պաշտամունքները (Յովն. Ի. 19): Պօղոս առաքեալ կիւրակէ  
օրը կը քարոզէ Տրովագացիներուն եւ կը հրահանգէ զանոնք  
(Գործ. Ի. 7), ամենուրեք քրիստոնեաները կիւրակէ կը հա-

ւաքուին աղօթքի համար, ու այդ գումարումներուն առթիւ  
որքերուն ու այրիներուն նպաստ կը հաւաքեն (Ա. Կ. ք. Բ. Ժ. 2):  
Յովհաննէս աւետարանիչ՝ Պատմոս աքսորուած՝ կիւրակէ  
օրը կընդունի մարգարէութեան ողին (Յոյ. Ա. 10): Այս ամեն  
պարագաները կը ցուցնեն, թէ առաքեալներուն օրէն կիւրակէն  
«տէրունական օր» եղած էր, իր անունին համաձայն: Նոր  
կտակարանի գրքերէն դատ, Վարդապետութիւն առաքելոց  
կոչուած գիրքը, որ առաքելական դարուն գրուած է, նոյն ժա-  
մանակի քրիստոնեայներուն կը պատուիրէ, «կիւրակէ օրերը  
հաւաքուեցէք հայր բեկանելու եւ գոհութիւն մատուցանելու  
համար, մեղքերնիդ մէկմէկու խոտտովանելէ վերջ, որպէսզի  
սուրբ Ըլլայ ձեր պատարագը»: Իսկ Յուստինոս վկայ կը պատ-  
մէ, թէ կիւրակէ օրերը քաղաքներն ու գիւղերը գտնուած  
մարդիկ իրարու մօտ կը ժողվուէին, եւ առաքեալներուն ու  
մարգարէներուն գրքերը կը կարդային, կ'աղօթէին ու կը հա-  
ղորդուէին եւ աղքատները կը մխիթարէին:

Սոյն տողերը մեզի կը ցուցնեն, թէ ի՛նչպէս պէտք է ան-  
ցընել կիւրակէն, մեր հանգստեան օրը, աղօթել, հաղորդուիլ,  
Ս. Գիրք կարդալ եւ ողորմութիւնով զբաղիլ: Ահա ասոնք պի-  
տի Ըլլան մեր գործերը տէրունական օրուան համար: Կը քաշ-  
ուիմ ըսելու, թէ կիւրակէն մեզի համար ո՛չ թէ հանգստեան  
այլ պարսպ օր մը եղած է, եւ գիտէք ի՛նչ անազին ու ան-  
չափելի տարբերութիւն կայ հանգիստին ու պարսպին մէջ:  
Մեզմէ երիտասարդները կը սպասեն կիւրակէին, որպէսզի՝ իրենց  
գործերը թողած՝ կարող Ըլլան աշխարհական հաճոյքներու եւ  
զուարճութիւններու նուիրել ինքզինքնին. ծերերը կը սպասեն  
կիւրակէին որպէսզի փողոցներուն մէջ նստած իրենց անպէտ ու  
ապարդիւն չաղակրատութիւնը ընեն ու զուարճանան անցորդ-  
ներով. կիները կը սպասեն կիւրակէին, որպէսզի իրենց պա-  
հնի զգեստներն հագած ինքզինքնին ցուցադրեն ու մէկզմէկ  
բամբասեն. աղջիկները կը սպասեն կիւրակէին, որպէսզի իրենց  
հաճոյալի պտոյտները կատարեն պարտէզներու մէջ, եթէ ամառ  
է, եւ զբօսնուն տունը, ձմեռ ատեն. տղաք կը սպասեն կիւ-

րակէին, իրենց խաղերով զբաղելու համար: Եւ այս ամենը պահուած են կիւրակէին, որպէսզի չի վնասեն մեր գործի օրերուն: Եթէ մենք հանգիստը կարող եղած ըլլայինք գնահատել, ասոնք չպիտի ըլլային մեր կիւրակէի զբաղումները: Հանգստեան օրը՝ կիւրակէն՝ գործունէութեան ամենէն մեծ օրն է, որովհետեւ կիւրակէին մանաւանդ հայրը պիտի կրնայ՝ մտամփոփ ու հանգչած՝ իր շուրջը ժողովել իր տունին անդամները, կարգալու անոնց, Ս. Գրոց պատուիրաններէն, զբաղելու իր զաւակներուն բարոյականով, զանոնք ազօթքի հրահանգելու, արթնցնելու անոնց մէջ կենդանի հաւատքը եւ օրը արդիւնաւորելու բարեւոյաշատ մտածումներով: Կիւրակէին մանաւանդ մայրը՝ իր անական գործերէն դադրած՝ պիտի կրնայ իր աղջիկներուն պարկեշտութեան ու առաքինութեան հոգեւորօվ զբաղել եւ ծերունիները՝ իրենց կեանքին ու տարիքին փորձառութիւններէն խրատուած՝ պիտի կրնան երիտասարդներուն պատմել կեանքի ունայնութիւնը ի՛ր հաճոյքներուն եւ իր աշխարհիկ միտումներուն մէջ: Դուք, ո՛չ միայն այս ամենը զանց ըրած էք բոլորովին, այլ եւ երբ կիւրակէ օրեր ձեզմէ ոմանք եկեղեցի կուգան, կարծես հոն ձանձրոյթի մը բեռին տակ կ'ապրին, միշտ անհամբեր սպասող եկեղեցական ժամերգութիւններու աւարտին: Իսկ ուրիշներ բնաւ չեն գար, ու նոյն օրը կը յատկացնեն առեւտրական գործերու: Իմ եղբայրներս, ձեր յոգնած հոգիները եւ քայքայուած սրտերը պէտք ունին հանգստեան. ամենէն աւելի կիւրակէին սրբութիւնը պահպանելով պիտի կրնաք այդ հանգիստը գտնել, եւ ինքզինքնիդ պատրաստել վաղուան դժուարութիւններուն ու նեղութիւններուն: Հարցուցէ՛ք ծերերուն, թէ անոնք ո՛րքան կը բաղձան իրենց երիտասարդ կեանքի օրերուն, որոնք իրենցմէ ապարդիւն անցան գացին. տխուր փորձառութիւնը շատ ուշ կը քաղցրացնէ այդ օրերուն յիշատակը: Դուք ալ պիտի փնտռէք հիմա ա՛յդքան անարգուած հանգստեան օրերը, բայց անոնք անցած պիտի ըլլան: Ժամանակը ետ չգառնար բնաւ: Բայց դուք կրնաք տակաւին ժամանակ չահիլ ու ծախու գնել, կրկնա-

պատկելով ձեր ջանքերը, կենդանացնելով ձեր հաւատքը, եւ կիւրակէի հանգստութիւնը ձեր հոգիներուն ու սրտերուն օգտակար գործելով: Հոգիի սոյն վիճակը պիտի նպաստէ նաեւ ձեր աշխարհական գործերուն ու յարաբերութիւններուն, որովհետեւ հոգիով ու սրտով զօրաւոր մէկը շատ աւելի կը յաջողի քան տկարամիտ ու անհոգի մարդը:

Երկինք'ը, ձանչցէ՛ք կիւրակէին արժէքը, ու ըստ այնո՛ւ օգտակար ըրէ՛ք զայն ձեզի համար. կինք'ը, յարգեցէ՛ք կիւրակէն, ու ձեր բարեպաշտութեան բոլոր ուժով յատկացուցէ՛ք զայն ձեր ընտանիքներուն բարոյական ու հոգեկան դաստիարակութեան. ծերե՛ք, սրբեցէ՛ք կիւրակէն, ու ձեր կեանքի փորձառութիւնով խրախոյս տուէ՛ք երիտասարդութեան, որ ձեզի մօտենալու ճամբուն մէջ կը գտնուի: Ու ամենքնիդ, աւելի տիրոջը շնորհքին արժանացած, պիտի կրնաք հանգարտ խղճով գոհանալու:

« Բաւական է, Տէր, որ քու առջեւդ շնորհ գտայ »:

Ք.

Մեր վիճակային եկեղեցիներուն ու ժողովուրդին խօսած ատենս, չէ՛ կարելի, որ զձեզ մտնամ, իմ երիցակից եղբայրներս. որովհետեւ դուք իբրեւ քահանայ կոչուած ունիք եկեղեցիով ու ժողովուրդով զբաղելու: Քրիստոնէութենէն առաջ քահանան եղաւ զոհարարն ու միջնորդը Աստուծոյ եւ մարդուն: Հին օրէնքին ու հեթանոսական կրօններուն մէջ, սակայն, քահանայութիւնը նիւթականացած պաշտօն մըն էր ծէսի եւ աբարողութեան, որուն մէջ կը պահուէր կենդանացնող ոգին. քարողութեան, որուն մէջ կը պահուէր անիկա, որուն չէր հպած տարերու վրայ դրոշմուած գիրն էր անիկա, որուն չէր հպած տակաւին Յիսուսի կենսաբաշխ ձեռքը, եւ անոր անմահական շունչը չէր անցած անոր վրայէն: Քահանայութեան հինի ու

նորի խորութիւնը շեշտուեցաւ Մաղաքիա մարգարէին կողմէն, երբ սա տեսնելով քահանաներու ազիտութիւնը եւ իրենց անաւոր կոչման կարեւոր արժանապատուութեան չգոյութիւնը, Աստուծոյ կողմէն պատուիրեց . «Քահանային շրթունքները գիտութիւն պահելու են . եւ օրէնքը անոր բերնէն փնտուելու են մարդիկ . . . : Բայց դուք ճամբէն խոտորեցաք , շատերը օրէնքին մէջ գայթակղեցուցիք . . . : Ուստի ես ալ ձեզ բոլոր ժողովուրդին առջեւ անարգուած ու ցած ըրի , ինչպէս որ դուք իմ ճամբաներս չպահեցիք , ու օրէնքին մէջ աչտուութիւն ըրիք» (Մաղ. Բ. 7-9) : Իրաց սա՛ վիճակին մէջ երբ հրէական տաճարին քահանաները իրենց զանցառութիւններուն համար անարգանքի կը դատապարտուէին, Յիսուս՝ Յաւիտեանական քահանայապետը՝ իր Եկեղեցիի երէցներուն ու քահանաներուն կը պարզեւէր հոգիին շնորհքը . ուսուցանելու , խրատելու , ուղղելու եւ մխիթարելու հոգեւոր կոչումը : Այդ կոչումով , դուք երիցակից եղբայրներ , բարոյական նոր պատասխանատուութիւն մը ստանձնեցինք , քանի որ Քրիստոնէութիւնը նիւթական շէնքերէն աւելի բարոյականը կը հիմներ , եւ նոխազներու պատարագին կը նախադասէր անկեղծ ու բարեպաշտ սրտերու , հաւատացեալ հոգիներու եւ մաքուր խղճմտանքի զոհը : Այն օրէն դուք հոգեւոր պաշտօնեան , Տէր Հա՛յրը եղաք սերունդներու ազնուացման , հոգիներու ուղեցրցը , բազմադարեան գաղտնապահը ժողովրդեան ցաւերուն , ընտանեկան յարկերու տակ պոթկացող ցաւատանջ հեկեկանքին . մխիթարիչը որբերուն եւ աչքիներուն , քաջալերողը յուսահատ սրտերուն , հաւատք ներշնչողը թուլցած հոգիներուն , եւ մատակարարողը քրիստոնէական փրկարար խորհուրդներուն : Այս կոչումով , երիցակից եղբայրներս , դուք ծանր ու շատ ծանր պատասխանատուութեան մը տակ կը գտնուիք , ծանր՝ Յիսուսի խաչին չափ , ու փրկարար՝ անոր նման : Եթէ ունենաք անոր զիտակցութիւնը , եւ ձեր կողմէն փոյթ ընէք անթերի կատարելու ձեր պարտաւորութիւնները , այն ասուն երանելի պիտի ըլլաք դուք : Ընդհակառակն , ձեր կողմէն եղած փոքր զանցառութիւններ կրնան

չատ ախուր հետեւանքներ ծնցնել , ու պաղեցնել ժողովուրդին մէջ հաւատքի եւ սոհմային եկեղեցիի սէրը : Ուստի ջանացէք մտամբիտի ու անձնդիր պաշտօնէի եռանդը ցուցնել ձեր մէջ . հաւատքին գործնական առաքինութիւններով զարդարուած : Հեռի՛ մոլութիւններէ , ընկերական ակումբներու եւ ընտանեկան ուրախութիւններու մէջ ցոյց տուէք ձեր անձին վրայ ժուղկալ պարկեշտութիւնը . չափաւոր ձեր վարմունքին , եւ ձեր պաշտօնին մէջ վեհանձն ու արդարասէր եղիք : Նեղութիւններու մէջ համբերութիւնը ձեր կոչումին պատիւը պիտի ըլլայ , եւ աստուածային խմտտուն խորհուրդներու հպատակութիւնը ձեր աստուածները պիտի փառաւորէ : Որչափ մեծ պիտի ըլլայ երջանկութիւնը այն ժողովուրդին , որուն հոգեւոր պաշտօնեաները , կութիւնը այն ժողովուրդին , որուն հոգեւոր պաշտօնեաները , քահանաները , անյիշաչար , անբաժրաս , պարկեշտ ու առաքինի , միայն կը ծառային իրր աղբիւր Տիրոջը շնորհներուն , եւ կ'ուսուցանեն արդարութիւնն ու ճշմարտութիւնը : Չանացէ՛ք , երիցակից եղբայրներս , օգտակար ընելու ձեր պարապոյ ժամերը , քրիստոնէական գրոց ընթերցումներով , որոնք ուժ պիտի տան ձեզի շարունակ : Ծոյլ ու մեղկ կեանք մը՝ ընկերացած աշխարհասէր հաճոյքներու բաղձանքին , պիտի սպաննէ ձեր մէջ Տիրոջ ծառայելու կոչումը , անպիտան անօթներ պիտի չլինէ ձեզ . եւ օր մը ձեզի համար ալ պիտի ճշմարտութիւն աստուածաձեզ . եւ օր մը ձեզի համար ալ պիտի ճշմարտութիւն աստուածաձեզ . եւ օր մը ձեզի համար ալ պիտի ճշմարտութիւն աստուածաձեզ . եւ օր մը ձեզի համար ալ պիտի ճշմարտութիւն աստուածաձեզ : «Դուք ճամբէն խոտորեցաք , շատերը օրէնքին մէջ գայթակղեցուցիք , ուստի ես ալ ձեզ ժողովուրդին առջեւ անարգուած ու ցած ըրի» : Վա՛յ այն հոգեւոր պաշտօնէին , որ ուրիշը կը գայթակղեցնէ շնորհաց կեանքին մէջ : Ձեր կեանքը ուրիշներու կեանքին պէս առանձնութեան մէջ չէ որ կապրի , դուք ստիպուած էք ձեր կոչումին ու ձեր նուիրումին համեմատ հանդիսաւոր կեանքը ապրելու , որուն մէջ ծառայութիւնը փառք մըն է , ու սպասաւորութիւնը պարծանք : Մարդիկ որ գիտեն վարձատրել՝ ա՛յնքան վեհանձնօրէն իրենց տունի սպասաւորները , երբ ասոնք հաւատարմութեան օգի ցոյց կուտան իրենց նիւթական ծառայութիւններուն մէջ , ո՛րքան աւելի մեծ պիտի ըլլայ այդ վարձատրութիւնը ,

որ պիտի տրուի Աստուծոյ կողմէն, հոգեւոր պաշտօնէի մը կեանքի ասպարէզին իբրեւ մրցանակ: Թեթեւ մտածումներով ու չպատրաստուած հոգիով մի՛ մտենաք Տիրոջը սեղանին, Բաւութեան պատարագը մատուցանելու, որպէսզի անիկա դատապարտութիւն մը չըլլայ ձեզի ու ժողովուրդին համար:

Կը զգամ, թէ ի՞նչ դժուարութիւններ կան մեզի դէմ ա՛յն ժողովուրդին մէջ, որ անհատներու նկարագրի, խառնուածքի, համոզման, զգացումներու, միտումներու, յուզումներու եւ մտածումներու անհուն զանազանութիւնէն կը կազմուի, եւ քանի որ ամենուս պարտաւորութիւնը պիտի ըլլայ այդ ամենը ձուլել՝ նոյն իսկ իրենց գործերով՝ հաւատքի յարմարութեանը մէջ: Անոնցմէ ոմանք աչառութեան կը սպասեն մեզմէ, ոմանք շողորթութիւնէ հաճոյք կը զգան, ոմանք կը վշտակրին երբ իրենց յանցանքը իրենց երեսին դարձնենք: Մենք քմահաճոյքի գերիներ չենք ընաւ, այլ սպասաւորները մեր կոչումին ու պաշտօնին, որ սրբութենէն, արդարութենէն, ճշմարտութենէն, ու անաչառութենէն դուրս հիմ չը ձանձնար իրեն: Հարուստ ու աղքատը, սպասաւորն ու պաշտօնեան, կլինն ու ծերունին հաւասարապէս զաւակներն են մեր եկեղեցիին, բաւական է որ հաւատքի որդիներ ըլլան անոնք, հետեւաբար միեւնոյն պաշտօնն է, զոր ի գործ պիտի դնենք անոնց հանդէպ: Աղքատը հոգալ, մխիթարել սգաւորը, խնդակցիլ ժողովուրդին բարի յաջողութիւններուն, ցաւակցիլ անոնց հոգեւոր ու մարմնաւոր անկումներուն, մեր պարտաւորութիւններէն մին կը կազմէ:

Սիրել ժողովուրդը ու սիրուիլ անկէ, ծառայել ժողովուրդին, սպասաւորել սեղանին ու անկէ կերակրուիլ, թող ձեր ամենուրեք բաղձանքը ըլլայ: Սոյն ինքնաբեր ծառայութեան մէջ մեր սրտին ու խղճին զգացումներու համադրութիւնը՝ միացած Տիրոջը այգիին մէջ մեր ունեցած գործունէութեան, պիտի վկայէ, թէ կրցած ենք աւետարանը ըմբռնել իր լոյսին ու շնորհքին մէջ, ու այդ վկայութեամբ միայն ուժ պիտի ունենանք գոհանալու Տիրոջը, եւ բսելու անոր:

«Բաւական է, Տէր, որ քու առջեւ շնորհ գտայ»:

Ժ.

Մեր առաջնորդական թեմը իր աշխարհագրական դիրքով, հողային մշակութեան անգոհացուցիչ վիճակով, արհեստական ու վաճառականական զբաղումներու նուազութեան պատճառով շատ կանուխէն ծնունդ տուած է մասնակի գաղթականութիւններու եւ շարունակական պանդխտութեան. այնպէս որ քաղաքի ընակչութեան՝ 1/3-ը եւ մեր գիւղերու 1/4-ը այսօր պանդխտած են Պոլիս, Պրուսա, Ադրիանուպոլիս, Հալէպ, Պուլկարիա, Եգիպտոս, Ամերիկա եւ այլուր: Պանդխտութեան տարաշխարհիկ կեանքը այլեւս ստիպողական պէտքը դարձած է մեր ժողովուրդին, ապրեցնելու համար իրենց տուները, որոնք՝ առանց այդ պանդխտութեան՝ Յիսուսի հրաշքին պիտի կարօտէին կերակրուելու համար: Հին ատեններ պանդխտութիւնը ո՛րքան անհրաժեշտ, նոյնքան անհրաժեշտ դարձած է եղեր գէթ երկու տարին մի անգամ հայրենիք վերադառնալու կարեւորութիւնը: Այս աեսակ պանդխտութիւն մը կրնար ընտանիքները առաջնորդել համակերպող համբերութեան մը, առանց ո՛ր եւ է անհաճոյ ու անպարկեշտ հետեւանքներ ծնցնելու, որովհետեւ կլինը գիտէր, թէ մինչեւ ե՛րբ պիտի սպասէր իր ամուսինին: Հիմա, ընդհակառակն, բոլորովին փոխուած է պանդխտութեան գոյնը. զաւակներ իրենց հայրերու օրինակին կը հետեւին դէպի դուրս ելած հոսանքին մէջ. իսկ վերադարձը դէպի տուն ու անոր ժամանակը Աստուած գիտէ միայն: Այսօր ունինք պանդխտ ամուսիններ ու զաւակներ, որոնք 4-5-10 15-20 տարիներէ ի վեր զրկուած կը մնան իրենց հայրենի տան օրհնութիւններէն ու վայելքներէն, եւ ասանկով պատճառ կըլլան իրենց տուներուն նիւթական ու բարոյական կործանուած մին: Մեր գիւղերէն մեծագոյն մասը մարդիկներու կարօտը կը



քաշէ, եւ ուր որ պանդխտութեան երեսէն մարդերու պակասը  
 զգալի թիւ մը կը կազմէ, հոն ընդհանրապէս անհանգիստ կընէ  
 մեզի պարկեշտութեան ու բարքերու այլատեսութիւնը: Հողերը՝  
 նոյն իսկ իրենց աննշան քանակութեան մէջ՝ անբեր ու անուշակ  
 կը մնան, այգիները կը խոպանանան, ու տուները իրենց ներ-  
 քին կազմակերպութեան մէջ կը լուծուին կը քայքայուին այ-  
 բախարատ հարմաներու եւ որդեկորոյս մայրերու արցունքի յորդ  
 հեղեղին մէջ: Ինչո՞ւ, դուք պանդուխտ եղբայրներ, ինչո՞ւ  
 այսքան անտարբերութեամբ կը վերադարձուիք ձեր մայրենի  
 օճախին: Ինչո՞ւ շուտով կը մոռնաք ձեր բաժանման աւուր  
 արցունքն ու վշտարեկութիւնը. արդեօք ձեր կիներուն հա-  
 ռաչանքները չե՞ն խռովեր ձեր քունն ու հանգիստը, կամ ձեր  
 զաւակներուն բողբոջը չի՞ դպչիր ձեր սրտին: Ինչ որ ալ ըլլաք,  
 եղբայրներս, ձեր պանդխտութեան խանին անկիւնը կամ ձօխ  
 տուներու ներքնասենեկին խորը, տակաւին մի՛ մոռնաք թէ  
 հայրերն էք ու զաւակները միանգամայն ա՛յն քաղաքին ու  
 գիւղերուն, ուրկէ բաժնուեցաք քիչ ժամանակէն դառնալու  
 խոստումով: Ինչո՞ւ կը դբժէք ձեր այդ խոստումին:

Այսպէս կը մտածեմ թէ որչափ ատեն ձեր սրտերուն մէջ  
 տեղ մը ունենայ կարօտի ու սիրոյ զգացումը — ու վստահ ե-  
 ղիք թէ պիտի մնայ շարունակ — դուք երբեք հանգիստ չպիտի  
 կրնաք վայելել ձեր պանդխտութեան օրերուն, թէ իսկ ձեր  
 գանուած միջավայրը ձեզի հաճոյքներ պատրաստէ: Այդ հա-  
 ճոյքները՝ որոնք օրինաւորութեան սահմանէն կը հեռացնեն  
 ձեզի, փուշեր կըլլան ձեզի համար ձեր մտամխտութեան վայր-  
 կեաններուն երբ խղճերնիդ զձեզ առանձին գտնէ ձեր խոր-  
 հրրդածութիւններուն եւ ձեր անյաջողութիւններուն մէջ: Ու  
 ձեր ամուսնութեան պակար, ու հայրական կոչման նուիրակա-  
 նութիւնը լուծ մը կըլլայ կաշկանդող ու մաշեցնող. քանի որ  
 այդ օրինակ զգացումները չպիտի կրնաք խեղդել ձեր մէջ: Թե-  
 բեւս ձեզմէ ոմանք ուղին այդ ալ ընել, բայց յաճողութիւնը  
 պիտի պակսի իրենց, մարդ մը, պանդուխտ մը մանաւանդ, չպիտի  
 կրնայ կուռիլ ընտելեան ու ներքին ազդուներուն դէմ. այն-

պէս որ դուք շարունակ ձեր շուքին մէջ պիտի տեսնէք ձեր  
 կինը, ձեր զաւակները, ձեր հայրը, մայրը ու պարագաները.  
 հողի խռովքը ձեր անբաժան ընկերը պիտի մնայ: Երբեք չեմ  
 կրնար ձեր մէջ երեւակայել անզգամը՝ յարատեւող ու անուղ-  
 դայ, որ իր ճամբէն մոլորած ըլլայ, ու գէթ չը յիշէ ուղղու-  
 թեան ճամբան: Դրախտէն արտաքսուած Ադամ անգամ ակա-  
 մայ իր նայուածքը դարձուց կորուսած Եդեմին, ու իր կեան-  
 քին մէջ անոր յիշատակովը այրեցաւ:

Մարդիկ աշխարհի մէջ ընտանիքի մը պատկանելու հա-  
 մար եղած են. ու հոն վնասելու իրենց կեանքի երանաւէտու-  
 թիւնը: Նախկին դարերու նահապետական կեանքի ատեն եր-  
 բեմն պէտք կը տեսնուէր խմբովին գաղթելու աւելի յուռթի ու  
 պարարտ արօտներ վնասելու իրենց հօտերուն համար: Բայց  
 խելքովին կերթային այդ կամաւոր պանդխտութեան լուծը  
 կրելու: Արդի քաղաքակրթութեան ատեն, քաղաքներու եւ  
 գիւղերու հիմնարկութիւնը ինքնին ցոյց կուտայ թէ մարդ պիտի  
 մնայ հոն գործելու ու ապրելու համար. կ'արդարանայ միայն  
 ընտանիքի բոլոր անդամներով այլուր փոխադրուելու սկզբունքը.  
 իսկ ճամբորդութիւնները՝ ըլլան առեւտուրի թէ գրօսանքի հա-  
 մար՝ երբեք պանդխտութեան կերպարանք չեն կրնար առնուլ,  
 մեր հասկցած իմաստով: Մեր արդի պանդխտութիւնը, ի՛նչ  
 պարագաներէ ալ ծնունդ առած ըլլայ՝ վէրք մը եղաւ ընտա-  
 նիքի կուշտին վրայ, անբշխելի՛ թերեւս, եթէ դուք, պան-  
 դուխտ եղբայրներ, փոյթ չընեք զայն դարմանելու: Դուք այն  
 վէրքերը հեռուէն միայն կը տեսնէք, ու անոնց խղիւսայթոււմը  
 հազիւ թէ կը զգաք ա՛յն ծալմաշ թուղթերէն, որոնց մէջ կը  
 ծրարուին երբեմն ձեր ընտանիքներու ու ձեր մայրերու հողին.  
 մենք շարունակ կը տեսնենք այդ վէրքերը, ու կը վշտակրինք  
 ձեր անբախտութեան ու տխուր վիճակի մասին: Հին Կտակա-  
 րանը իբր անէձքի արդիւնք կը նկարագրէ պանդխտութիւնը  
 հրեայ ժողովուրդին համար: Դուք այդ անէձքին զաւակները  
 չէք բնաւ. այլ օրհնութեան ու չնորհաց զաւակները, որոնք  
 կոչուած են ընտանիք մը երջանկացնելու: Դուք պանդուխտ



եղբայրներ, այդ շնորհը մէկդէի ըրած, կամաւոր աքսորանքի մը դատապարտած էք ձեր անձերը, շահելու դիտումով: Բայց ի՞նչ կարժեն (ձեր շահերը, ձեր նիւթական բարիքները, երբ անոնք՝ ձեր պանդխտութեան երեսէն պատճառ կըլլան ձեր առողջութեան խանդարումին, ձեր տուներուն քայքայման, ձեր հայրական ու որդիական պարտաւորութիւններուն մոռացման: Կորստական կերակուրը փնտռած ժամանակնիդ փրկարար մտունդը կը կորսնցնէք, դրամ վատկաց ժամանակնիդ պատիւնիդ վրայ յիշուտաք, հաճոյք ունեցած ատեննիդ կեանքերնիդ կը մաշեցնէք: Յիշեցէք թէ ո՞ւր են ձեր քրտինքը սրբող մայրերը, ո՞ւր են ձեզ մխիթարող կիները, ո՞ւր են ձեզ քաջալերող զաւակները. ձեզմէն հեռու, հեռու շարունակ, ու դուք անոնց կարօտով կը հիւժիք: Երբեմն մեզի կը հասնի ձեզմէ մէկուն կամ միւսին մահուան լուրը, որ ձեր խոնքերը ամայութեան կը դատապարտէ: Երկար ատեն անօթի ծարաւ սպասող կնկան, կամ շարունակ արցունք թափող մօր մը վարձատրութիւնն է ասիկա:

Մի՛ ուշանաք ձեր պանդխտութեան մէջ, իմ եղբայրներս, ու ստէպ ստէպ դարձէք դէպի ձեր քաղաքը, ձեր դիւղերը, ուր ընտանեկան շխարօսն ու սէրը ձեզի կը սպասէ: Եթէ ձեռքերնիդ լեցուն գաք, պիտի ընդունին ձեզ ձեր զաւակները, եթէ ձեռնունայն գաք, նորէն պիտի ընդունին ձեզ սիրով, բաւական է որ ձեր պատիւովն ու ձեր առողջութիւնովը դառնաք: Ո՛վ որ առողջ է ու պատուաւոր, անիկա անօթի չի մնար երբեք. քիչ մը կուշտ, քիչ մը անօթի կեանքը՝ պարկեշտութեան մէջ՝ շատ աւելի քաղցր է քան յղփացած ու անպարկեշտ կեանքը: Ասոր փորձը ունիք դուք ձեր անձին վրայ. հիմա որ կը շահիք ու կը ծախսէք, բայց տակաւին սրտի հանգստութիւնը չունիք, ճանչցէք ձեր պարտականութիւնները ու դարձէք ձեր զաւակներուն, ձեր ընտանիքներուն մօտ, ուրախութիւնով, երջանկութիւնով ու քրիստոնէական օրհնութիւնով լեցուն սիրտ մը պիտի ունենաք: Երբ յոգնած ու քրտնած գաք կոխելու ձեր հայրենի տուներուն սեմը, սրտի ի՞նչ յուզումներ,

ուրախութեան ի՞նչ արցունքներ չպիտի թափէք, մեռնելէ առաջ ձեր սիրելիները գտած ըլլալուդ համար: Զեր հոգեկան այդ յուզումները ձեր աղօթքը պիտի ըլլան, գոհունակութեան ու երախտագիտական աղօթքը դէպի Աստուած, պիտի մոռնաք՝ ձեր դիրքը յաւանումին մէջ՝ պանդխտութեան երկարածիգ ու քաջքշուած տառապանքը, յոգնածութիւնը, նեղութիւնները ձեր տարաշխարհիկ օրերուն, ու պիտի ըսէք.

«Բաւական է, Տէր, որ քու առջեւ շնորհ գտայ»:

Վ Ե Ր Զ



ԿԵԴՐՈՆԱՏԵՂԻ

Գրատուն Պ. Պալենց

Չափնախնայար, Թիւ 20

Կ. ՊՈԼԻՍ

25

4002

« Ազգային գրադարան



№ 0030722

3877